

Г. Г. Тимонин - Чайковский
Литературный
хозяйств.
Р.

91479251

11-26

1915 р.

Чирческа джызия
Салманъ

24 JAN 2006 19 AUG 2011
1952
1952

САЛЬ-МАНЪ

САЛЬ-МАНЪ

2. Генераль-адъютантъ И. Д. Лазаревъ



ԳԵՆԵՐԱԼ-ԱԴՅՈՒՏԱՆՑ
Յ. ԼԱԶԱՐԵՎ

9(47.925)
1-26

9(47.925)
и-26

Арм.
Н 3-5065½₂

САЛЬ-МАНЬ

Ан.-1452

РУС-ССР

2. Генералъ-адъютантъ И. Д. Лазаревъ

ՌՈՒՍԱԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(1877—1878 թ.)

ԵԽ ՆՐԵ

ՀԱՅԱԶԳԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Բ

ԴԱԼՍԱՆԻ ԵՒ ՂԱՐՍԻ ՀԵՐՈՍ

ԳԵՆԵՐԱԼ-ԱԴՅՈՒՏԱՆՑ

ՅԱՎՀԱՆՆԵՍ ԴԱԿԻԹԻՉ

ԼԱԶԱՐԵԱՆ

(Կենսագրութիւն՝ պատերազմին վերաբերեալ լուսանկար-
ներով)

Առ., № 22141

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ելեկտրական տպարան Ա. Մ. Կերևելիձեի

1915

Ա. Բ. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Մինչև այսօր հայազգի պատերազմական հերոսներից՝ զօրապետներից ոչ մէկի անւան շուրջ ստեղծւած չեն այնքան հետաքրքիր ու հերոսին բնորոշող պատմւածքներ, նրանց քաջադրութիւնների մասին էպիզոդներ, հայրենասիրական արտայայտութիւնների միջնադէպեր, որքան այդ կը գտնենք մենք գեներալ Լազարեի վերտերմամբ։ Կովկասեան տարբեր ազգերի և մանաւանդ հայ ժողովրդի համար նա զառել էր բառիս բուն և ամենալայն մտքով ժողովրդական հերոս։ Լազարե ասելով ժողովուրդը մինչև այսօր էլ հասկանում է մարմնացեալ քաջութիւն, անվեհերութիւն, հասարակ ժողովրդին, զինւորին ամենամօտ մարդ, որի հետ նա պատրաստ էր անվախ մտնել կրակի ու ջրի մէջ՝ գրանցից քաջաբար ու պատռվ դուրս գալու համար։

Գեռնարկելով ժողովրդի համար գեներալ Լազարեի այս համեստ կենսագրութիւնը, մենք ոչ հնար և էլ ոչ ժամանակ ունէինք ի մի ժողովել նրա անձի և անւան շուրջ եղած անթիւ պատմւածքների և մի հարիւրերորդականը, այլ, ցանկանալով ընթերցող հասարակութան ձեռքը տալ այդ վերին աստիճան տաղանդաւոր և ինքնատիպ զօրապետի կենսագրութիւնը, ի նկատի ունէինք միայն և միմիայն այն բոլորը, ինչ որ պաշտօնապէս արձանագրւած է ուռա զօրքի պատմութեան մէջ. ահա թէ ինչու մենք այս աշխատութեան որպէս հիմք ընդունել ենք կովկասեան զօրքի և նրա զօրապետների անցեալին քաջ ծանօթ



39778-63

այսնի պատմաբան գեներալ-լեյտենանտ Վ. Ա. Պոտիոյը՝
շահնաւոր «Генераль-адъютантъ Иванъ Давыдовичъ
Лазаревъ» վերնադրով աշխատութիւնը, որ լոյս է տեսել
մի ստւար հատորով 1900 թւականին։ Այդ գրքի մէջ, հե-
ղինակին յատուկ ոգեօրութեամբ ու ծշմարտասիրութեամբ
ժողովւած են Լազարեկին վերաբերեալ պաշտօնական ու
արժանահաւատ կենսագրական բոլոր փաստերը, որոնք
եթէ ոչ լիովին, սակայն բաւարար չափով բնորոշում են
Լազարեկի տաղանդը, քաջութիւնը և կատարած խոշոր դե-
րը՝ սկսած 40-ական թւականներից մինչև նրա մահը։

Բացի յիշեալ աշխատութիւնց մենք մեր ձեռքի տակ
հնք ունեցել կովկասեան Զինւորական Շտաբի մի շարք
հրատարակութիւններ՝ յատկապէս 1877—1878 թւականի
ուուս-թուրքական պատերասմի մասին, որոնց մէջ Լազա-
րեկի դէմքը տչքի է ընկնում պաշտօնական վաւերագրերի
հիման վրա։

Այդ աշխատութիւններից յիշատակելու ենք։

1) Գեներալ Զերնեաւսկու „Материалы для описанія
Русско-Турецкой войны 1877—1878 г.г.“ եռահատոր
դրածքը։

2) «Журналъ военныхъ дѣйствій главныхъ силъ
корпуса» գանագան հրատարակութիւնները։

3) «Война въ Турецкой Армении», գեներալ Քիշ-
միշեկի աշխատութիւնը։

4) «Военное Обозрѣніе»-ի մի քանի տարիների
Ամ-ը։

5) Այդ պատերազմում Լազարեկի հետ մասնակցող մի
շարք սպաների յիշատակարանները, որ լոյս են տեսել
«Русская Старина»-ի Ամ-ում և

6) «Военный Сборникъ» 1880—1881 թւականնե-
րում լոյս տեսած յօդւածները։

Շատ և շատ ցանկալի էր, որ հանգուցեալ գենե-

րալ Յով. Լազարեկի կենսագրութիւնը հայ գրականութեան
մէջ շսահմանափակւէր մեր այս համեստ աշխատութեամբ,
այլ գտնուէին կարող անհատներ, որոնք ժողովէին Լազա-
րեկի մասին ժողովրդի և ժամանակակիցների մէջ պտըտ-
ող այն բազմաթիւ պատմւածքները, որոնք բնորոշում
են նրան ամեն կողմից, մասնաւանդ իբրև մասնաւոր մար-
դի, ինքնատիպ հայի և քաղաքացու։ Այս բանը մաս-
ւանդ հարկաւոր է անել այժմ, քանի դեռ ևս ապրում են։
Լազարեկի ժամանակակիցները և թարմ է ժողովրդի մէջ
նրա յիշատակին ու նրա մասին յիշողութիւնները. կանց-
նեն էլի տաս-քսան տարիներ և այսուհետև այլևս անհնար-
կինի թարմ յետքերով գտնել, ժողովել այդ նիւթերը։
Ժամանակը շատ բան կըջնջի, և վերանորոգել այդ բոլորը
կղառնայ շատ դժւար, եթէ չասենք, անկարելի։

Աշխատասիրող

Ա Պ Ե Զ Ի Ն Մ Ա Յ

Լ Ա Զ Ա Ր Ե Ւ Ը Դ Ա Ղ Ա Տ Ա Ն Ո Ւ Մ

1. ՀԱՍՏԱՐԱԿ ԶԻՒԽՈՐԻ ԱՍՏԻՃԱՆԻՑ ՄԻՆՉԵԿ ԱԻԱԳ-
ՕՖԻՑԵՐՈՒԻԹԻՒՆ

Գեներալ-ադիւտանտ Յովհաննէս Լազարկը բնիկ դա-
րաբաղցի է, ծագումով՝ Զանգեզուրի հայ մելիքներից:
Նրա հայրը՝ Դաւիթը և մայրը՝ Մարիամ (Քաղանթարեան
տոհմից) Ղարաբաղի մայրաքաղաքում՝ Շուշում յարդւած
էին որպէս հայերի, նոյնպէս և թուրքերի կողմից:

Ղարաբաղի կոփէների շրջանում՝ 1820 թ. նոյեմբեր
17-ին ծնւռմ է Դաղստանի կոփէների, Ալաջայի և Ղար-
սի ապագայ հերսո, Գործող Բանակի կորպուսի նրամա-
նատար գեներալ-լէյտենանտ, գեներալ-ադիւտանտ Յով-
հաննէս Լազարկը, որը, իր անձնական քաջութեամբ, ու-
ժեղ անհատականութեամբ և հմուտ զօրապետին յատուկ
անվեհերութեամբ, ուսւ զօրքի փառաւոր պատմութեան
մէջ բռնում է առաջին տեղերից մէկը:

Մինչև զինւորական ծառայութիւն մտնելը պատանի
Լազարկը մի հասարակ դերձակի մօտ աշակերտ էր, սա-
կայն, ոգեսորւելով Շուշում զանւած ուսւ զօրականներից,
նա թողնում է դերձակութիւնը և գիշեր-ցերեկ երազում
է զինւորների շարքում նրանց հետ ծառայելու և կոփէ-
ներում մասնակցելու մասին: Այդ բանը նրան աջողւում
է. թողնելով հայրենի տունը, նա փախչում է Շիրւանեան

գունդ և սրա բատալիոններից մէկի հետ ուղերւում է ֆաղստան, ուր այդ թվին լեռնականների մէջ ապստամբութիւնը ուսւս տիրապետութեան դէմ սկսել էր օր ըստ օրէ մեծանալ:

Լեռնականների դէմ սկսած կոխւներից մէկում՝ Իզամի առւլի մօտ, գեներալ Գրաբբէի հրամանատարութեամբ տեղի ունեցած կաւում 20 տարեկան հասարակ զինուոր Լազարել «բոլոր զինուորներին քաջութեան և ինքնազոհութեան օրինակ ծառայելու համար» ստանում է օֆիցիերի աստիճան: Ահա այդ ժամանակ էր, որ ուսւս զօրքի դէմ է զուրս գալիս իր 10 հազար քաջերով՝ միւրիդներով, նա ինը՝ Դաղստանի պատմական հերոս Շամիլը: Սա ապստամբ Աւարիայի լեռներում՝ Դարադաղի կամուրջի մօտ ընդառաջում է ուսւսաց կորալուսին և, ըսնած ամուր զիրքեր, ճակատի է պատրաստում: Երիտասարդ օֆիցիեր Լազարել այդ ժամանակ իր բոտայի զլուխն անցած պաշտպանում էր առաջաւոր զիրքերը, երբ նրա վրայ յարձակւում են Շամիլի քաջերը և բոտայի հետ տար սւինամարտի բռնւում: Մինչեւ երեկոյ շարունակւեց այս յամառ կոխւը, սակայն Շամիլը չի կարողանում ուռւներին իրենց զիրքերից զուրս քշել և նա, մութն ընկնելուն պէս, դադարեցնում է յարձակումը: Այս համարձակ կուում ցոյց տւած իր անվեներութեան պատճառով Լազարել ստանում է «քաջութեան համար» օֆիցիերական անդրանիկ պարգեր՝ Աննայի 4 րդ աստիճանը:

Դրանից յետոյ թէ Դաղստանում և թէ Զենյայում ապստամբութիւնը սկսում է ծաւալւել ոչ թէ օրերով, այլ ժամերով: Մօտ 40 հազար լեռնականներ, ամրացած իրենց անառիկ լեռներում ու կիրճերում, ոտից զլուխ զինւած, հաւատի կոխւ (դադարաթ) են յայտարարում ուսւս իշխանութեանը: Այս կոխւներում ուսւս զօրքը ահա-դին կորուստներ է ունենում, մերթ նա ձեռք է զցում

Անամու մի գիրք, մերթ, ստիպւած, բաց է թողնում ու նահանջում: Իրար ետևից գալիս հասնում են Ռուսաստանից նորանոր գունդեր՝ փոխարինելու կոխւների մէջ նոսրացած ընկերների շարքերը: Ահա այդ կոխւների մէջ կոփւում է Լազարեկի հոգին ու մարմինը և, նորանոր քաջութիւնների ասովարէզ բացելով, նրան իր գնդում յայտնի է դարձնում: Այդ ընդհարումներից մէկում՝ Թիվթի կիրճում 1846 թվին Լազարե, ոիր և իր բոտայի ցոյց արւած արտակարգ քաջութեան համար», պարզեատրւում է Աննայի 3-րդ աստիճանով, իսկ Սալթիի ամրութիւնների մօտ սեպտեմբերի 14-ին թշնամու դէմ տարած յաղթութեան համար, որի ժամանակ Լազարել խլում է Օմար-Դէբիրի զրօշը և մի թնդանօթ, իշխան Վօրօնցովի առաջարկութեամբ արժանանում է Վլագիմիրի 4-րդ աստիճանին: Սակայն այս կոխւներից մէկը՝ Միսկինջինի զրոնը Լազարեկի համար քիչ էր մնում, որ ճակատագրական վննէր: Միսկինջինի զրոնի հէնց սկզբից Լազարել, անցած իր 7-րդ բոտայի զլուխը, չնայած թշնամու ոչնչացնող կրակին, մազլցելով քարածայուերից յարձակւում է թըշնամու վրայ: Նրա հուժկու մարմինը, բարձր հասակը աչքի ընկնելով, գառնում է թշնամու համար նշաւակ, և նրա վրայ սկսում է թափւել զնդակների մի տարափու Լազարել մի վայրկեան տատանում է և վայր ընկնում վիրաւորւած թէ զգից և թէ զլիից:

Արիւնաթաթախ, ուշաթափ վիրաւորին դուրս են տանում կուի դաշտից և վէրքերը կատելով ուղարկում են Ախտի բերդը: Երեք բժիշկներ, քննելով վէրքը, յայտնում են գրականապէս, որ Լազարել ամենից ուշ մի օրից յետոյ կը մեռնի: Այս գատավինը ունենում է նրա համար փրկարար նշանակութիւն: Լազարեկի եղբայրը, տեսնելով, որ ամեն ինչ կորած է, զիմում է վերջին միոցին. նա հրաւիրում է լեռնացիների մէջ մեծ ժողո-

վրդականութիւն վայելող մի տեղացի «հեքիմ»։ սա իսկոյն պատրաստում է մի քանի զեղերից խառնուրդ և, տալով մահամերձ Լազարեխն, վայրկենապէս փոխուում է վիրաւորի գրութիւնը։ բորբոքումը գաղարում է, հիւանդը աշքերը բացում և նրա վէրքի միջից հեքիմը գուրս է հանում չերքեզկայի արծաթեայ փնջի մի մեծ կտոր, որ գնդակի հետ մտել էր վզի խոր վէրքի մէջ։ դրանով արեան վարակման առաջը առնւում է և բժիշկների կողմից մահւան դատապարտած Լազարեխ կեանքը փրկւում է։ Միսկին- ջինու մօտ ցոյց տւած այս քաջութեան համար Լազարեք ստանում է շապաս-կապիտանի աստիճան, իսկ մի քանի ամսից յետոյ, երբ առողջանում է նա, նորից անցնելով իր բոտայի գլուխը, մասնակցում գոռ Զոխ բերդի շուրջը տեղի ունեցած մի շարք տաք կոփւներին, իսկ յետոյ Գու- մաշի և Կումալուի խոշոր ընդհարումներին։ Սրանցից առաջինի համար նա ստանում է կապիտանի աստիճան, իսկ մէւաների համար արժանանում է Բարձրագոյն շնոր- հակալութեան։ Այս կոփւներով վերջանում է Լազարեխ, որպէս զօրագնդի սպայի, գործունէութիւնը և սկսում է նրա կեանքի մի այլ փառաւոր շրջան, երբ նա հրապա- րակ է գալիս ինքնուրոյն զօրամասերի և երկրի որոշ մա- սերի կառագարչի պատասխանառու գերերում։

2. ԱԱԶԱՐԵՒՄ ՄԵԽԾՈՒԿԻՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՔԻ

1850 թւի գարնանը կովկասի փոխարքայ իշխան Վահան Շահոնցովը դալիս է ճարաւային Դաղստան և, լսելով ռուսաց զօրաբաժնի հրամանատար իշխ. Մ. Արդութեանի զեկուցումը Հիւսիսային Դաղստանի յայտնի Մեխառուլիի խանութեան կառավարութեան մասին, որպէս յարմարագոյն կառավարչի նշանակում է Լազարեին։ Լաւ ծանօթ լինելով լեռնականների բարքերին, աեզական լեզվին և

ընդհանրապէս արևելքին, Լազարել, պաշտօնի գլուխն անց-
նելով, անմիջապէս գալիս է խանութեան զիսաւոր աւան-
Զենգութայ և իսկոյն շրջակայում է իրեն յանձնւած խա-
նութեան սահմանները: Տեսնելով նրա սահմանների ան-
պաշտպան դրութիւնը շրջակայ ապստամբ լեռնականների
յարձակումներից, իսկոյն սահմանների վրայ շինել է տա-
լիս պահակի համար մէկը միւսին մօտ մի շաբք ամրու-
թիւններ և ապա հէնց տեղացիներից, իր մօտ եղած ուսու-
զինւորներից և Ղարաբաղից նրա մօտ ծառայութեան եկած
քաջ հայ երիտասարդներից կաղմում է ձիաւորների եր-
կու հարիւրեալ, որոնք պէտք է պահպանէին խանութեան-
անդորրութիւնը թէ ներսի և թէ զրափ անհանդիստ տար-
րերից: Բացի այդ նա պարտաւորեցնում է իր իշխանու-
թեան տակ գտնւած 10 զիւղեցի աղամարդ աղղաբնակու-
թեանը, որ, հէնց որ սահմանապահ աշտարակների զիսից
կը լսեն հրացանաձգութիւն, իսկոյն զինւած, իրանց ձիա-
ների վրայ նստած, դուրս գան օգնութեան:

Բնորոշ է այստեղ մի հանգամանք ևս. Լազարել, իւմանալով այն մեծ նշանակութիւնը, որ ունի արեւելքում և մասնաւորապէս լեռնականների աշքում արտաքին շուքը, իրեն շրջապատում է այնպիսի ընտիր հարուստ և աչքի ընկնող շքախմբով ու թիկնապահներով, որ երբ նա, նստած իր սպիտակ արաբական նժոյզի վրայ, վեհ արտաքինով, խոժոր և ազդու հայեացքով, արևելեան կառավարիչներին յատուկ հանդիսաւորութեամբ զուրս էր գալիս ժողովրդի մէջ շրջակայելու, ազգաբնակութիւնը ըգգում էր, որ ինքն ունի մի կառավարիչ, որը զիտէ որպէս պատժել, նոյնապէս և զնահատել, ուստի ժողովուրդը ըստ այնմ էլ պահում էր իրեն:

Արակեսովի պարզ լինի Դաստիարակության մասին այդ ժամանակաշրջանում, ոռու կառավարութեան ջանքերը՝ այլ կերպու այդ.

երկրին և ապա Հազարեկի գործունէութիւնը, անհրաժեշտ
է ասել մի քանի խօսք:

19-րդ դարի սկզբներում Խուսաստանը, նւաճելով ա-
րևելեան Անդրկովկասին՝ Շուշւոյ, Գանձակի, Բագւի և
Դերենդի խանութիւններին, իսկ դրանից քիչ առաջ՝ մի-
ացնելով վրաց թագաւորութիւնը, տիրել էր գրեթէ ամ-
բողջ Կովկասին ու Անդրկովկասին ամեն կողմերից. մասմ
էր միայն Կովկասի արևելեան մասից մի կտոր—Դաղս-
տանն ու Զեչնան, որոնք, երեք կողմից շրջապատւած լի-
նելով ուսւ տիրապետութեամբ, դեռ ևս պահպանում էին
իրանց անկախութիւնը՝ չնորհիւ երկրի բացասիկ դիրքի՝
անսուիկ լեռների, անթիւ կիրճերի ու հաղորդակցութեան
ճանապարհների գրեթէ կատարեալ բացակայութեան։ Ահա
այդ գոռ լեռների վրայ ապրում էին 200 հազարի չափ
մահմեղական լեռնականներ—չեչեններ, լեզգիներ, կու-
միկներ, աւարցիներ և այն, որոնք, բաժանւած մանր ու
մեծ խանութիւնների, իրար հետ մշտական թշնամութեան
մէջ էին գանւում։ Գեներալ Երմոլավ վճռեց Կովկասեան
ուսւ տիրապետութիւնը առահովել լեռնականների յար-
ձակումներից և պատրաստւեց Դաղստանի ու Զեչնայի
խորքերը անցնելու ու տիրելու ծրագիրը կազմել, երբ,
անսպասելի կերպով, լեռնականների մէջ առաջ եկաւ կրօ-
նական մի նոր աղանդ, որը հետզետէ քաղաքական բը-
նոյթ ստացաւ և միւրիդիզմ անւան տակ միացրեց իր
զրօշի շուրջը լեռնականների մեծագոյն մասին։ Համա-
ձայն այդ ուսմունքի բոլոր մարդիկ հաւասար են լինելու
և հազարնուելու են միմիայն իրան հոգեսր մեծ պետին՝
իմամին, որը, որպէս Մահմեդի ժառանգ գոյութիւն ու-
նի Աստուծոյ խօսքը՝ զուրանը կատարելու և կատարել
տալու համար։ Ամեն բոլէ պատրաստ լինել յաւիտենա-
կանութեան համար և դուրս գալ զաղավաթ՝ քրիստոնեա-

ների գէմ սուրբ պատերազմի—ահա միւրիդիմի էու-
թիւնը։

Այս ուսմունքը ահագին ազդեցութիւն ունեցաւ ոռ-
սաց տիրապետութեան ընթացքին ամբողջ Կովկասում։

Դաղստանի ու Զեչնայի բաժան-բաժան ժողովուրդ-
ները միանում են և սկսում ենանդուն կերպով դիմագ-
րել ուսւաց տմեն մի քայլին։ Անսելի ջանքեր, ահագին
դրամ ու հազարաւոր զոհեր գրեց ուսւ կառավարութիւնը
միւրիդիմի դէմ կուելու և Դաղստանում ու Զեչնայում
իր տիրապետութիւնը հաստատելու գործում։ սակայն դա
առաջ էր զնում շատ գանգազ։ Քանի-քանի անդամ ան-
հուն զոհերով ձեռք բերած մի կտոր հող, մի ամբութիւն,
մի կիրճ, մի քանի շարթից նորից անցել է թշնամու-
ձեռքը և նորանոր զոհերի գուռ բացել։ Մի շարք իմամ-
ների հետ կոիւ մզելով, վաշտ վաշտի ետևից, գունդ գնդի
ետևից կորցնելով, վերջապէս, ուսւ կառավարութեանը ա-
ջողում է Դաղստանի այս ու այն մասում իր տիրապե-
տութիւնը հաստատել, բերդեր, ամբութիւններ շիներ,
դրանցում բերդապահ զօրք, թնդանոթներ զնել և, տեղա-
ցի խաների իշխանութեան վրայ յենւած, դիմանալ այդ
լեռներում։

Թւում էր, թէ տիրապետութեան գործը ամբացած
էր, որ մէկ էլ, 1832 թւին, հրապարակ է գալիս միւրի-
դիմի վերջին՝ ամենաստաղանդաւոր և ուղմիկ ներկայա-
ցուցիչ իմամ Շամիլը, որը, չնորհիւ վարչական արաւա-
կարգ ընդունակութիւնների, իր իշխանութեան շուրջն է
ժողովում Զեչնայի և Դաղստանի բաժան բաժան ցեղերին
և, գառնալով Արևելեան Կովկասի հրամանատարն ու
տէրը, իր 20 հազար կարիճներով մօտ երեսուն տաքի
անհաշտ ու կատաղի կոիւ է մզում ուսւ կառավարու-
թեան ու զինւորական ոյժի դէմ, մինչև որ անթիւ զոհե-
րի գնով իշխան Բարեատինսկուն աջողում է 1859 թւին

Դադստանի լեռների այս արծւին՝ Շամիլին գերել ու Պետրովադ Ազէքսանդր Ռ-րդ կայսրին ուղարկել:

Դադստանում ու Զեչնայում մօտ 40 տարի տևող պատերագմները ուռա զօրքի սպաների ու յետագայ նշանաւոր գորապեաների համար գառնում են ամենավտանդաւոր դպրոցները, ուր նրանք և մահ էին ձեռք բերաւմ և յաղթութեան, փառքի, քաջութեան ու առաջադիմութեան կարճ ճանապարհ հարթում:

Ահա այդ ահաւոր դպրոցն էին մտել և 19-րդ դարի հայագի մի շաբք տաղանդաւոր զօրապեաներ, ինչպէս էշն. Մ. Սրդութեանը, իշխ. Բեհրութեանները, Լորիս-Մելիքով, Տէր-Ղուկասով և մօտ 30 տարի այդ երկրում կռւող, ապրող ու կառավարող, Դադստանի իսկական հերոս գեներալ-ադիւտանտ Լազարի: Նրա համար Դադստանը դառնում է մի նոսց, որի միջից նրա անձնական քաջութիւնը, պատերազմական տաղանդն ու վարչական արտակարգ ընդունակութիւնները դուրս են գալիս ամբողջացած ու գտւած:

3. ԸՆԴՀԱՐՈՒՄ ՀԱԶԻ ՄՈՒՐԾԴԻ ՀԵՏ

Վարչական իր նորահաստատ կարդ ու կանոնի արդիւնքների նորատակայարմարութիւնը գործնականում Լազարել տեսում է հետեւեալ համարձակ արշաւանքի մէջ:

Լեռնականների մէջ իր անվեհեր քաջութեամբ յայտնի Հաջի-Մուրադ, ժողոված իր շուրջը երկու հազար քաջ ձիաւորներ, յունիս 17-ի լոյս 18-ին կէս գիշերին, մըտնելով Մեխտուլիի խանութեան սահմանները, քշում տանում է 14000 ոչխարներ: Միայն լուսաբացին է այդ մասին լուսմ Լազարել: Առանց ըովէ կորցնելու դուրս բերելով իր կազմած երկու հարիւր ձիաւորներին և Օղիում գանւած երկու բոտա զինւորներին, նա հրամայում է

պահակներին իմաց տալ միւս գիւղերին: Մի ժամւայ մէջ ամբողջ Մեխտուլիի խանութիւնը ձիանների վրայ էր արգէն. սակայն լուր է ստացւում, որ Հաջի-Մուրադը, մօտենալով սահմաններին, իջնում է Գերգերիլի ճանապարհով—այսինքն հեռացել է արգէն 40 վերատ: Այս բանը յետ չի կանգնեցնում Լազարելին և նա հրաման է տալի ամենակարճ լեռնային ճանապարհով կտրել Հաջի-Մուրադի ճանապարհը ուր և նա լինի, և ինքը իր ձիաւորներով առաջ է անցնում: Մինչ այդ հարևան մի քանի գիւղերի ձիաւորներ արգէն սկսած են լինում Հաջի-Մուրադի առաջաւոր մարզկանց հետ հրացանաձգութիւնը և աջողեցնում են սրան համբացնել իր առաջինադացումը: Կարճ ճանապարհով համառում է և երկու բոտան և, անցնելով աջ կողմը, սկսում կրակը. Հաջի Մուրադը մի պահ կանգ է առնում և, վտանգաւոր համարելով 14000 ոչխարների ոտքով գնալը, գերազաւում է զիմել յարձակման. և ահա հազար հոգինրա կտրիճներ հանած սրերը, սոսկալի ազագակով մտնում են միլիցիայի մէջ: Այդ վայրկեանին համառում է Լազարել իր ձիաւորներով և անցնում է թշնամու աջ թեր. մինչ այդ երկու բոտան կտրում է թշնամու թիկունքը և ահա, շրջապատւած չորս կողմից, սկսում է մի կատաղի կոփւ: Հաջի Մուրադին այժմ մնում էր միմիայն պաշտպանւել և իր փախուստի մասին մտածել: Մի քանի ժամ տեսող այս կռւում, կորցնելով հարիւրից աւելի սպանւածներ, թշնամին ցրւում է զանազան կողմեր և, տանելով իր հետ երկու հարիւրի չափ վիրաւորներ, մի կերպ ազաւում է կիրճերում ու քարաժայուրի ետեւում: Փառաւոր յաղթութիւնը բազմաթիւ աւարով մնում է մեխթուլինցիների ձեռքում:

Այս առաջին խոշոր և յաջող գործը մեծ ոգերութիւն է առաջ բերում ամբողջ խանութեան մէջ. այստեղ խկոյն աչքի է ընկնում Լազարելի կողմից ձեռնարկած

ինքնապաշտպանութեան գործի առողջ և նպատակայարմար կազմակորպութիւնը, որի համար Լազարե, միայն երկու ամիս կապիտանի աստիճանում մնալով, ստանում է մայօրի աստիճան և ապա առանձին շնորհակալութիւն՝ փոխարքայ իշխան Վորօնցովից. շնորհակալութեան թուղթը կարդացում է ամբողջ կորպուսի առաջ՝ ի գիտութիւն և ի Խրախոյս գորքի:

4. ԼԱԶԱՐԵԻ ԴԱՐՁՈՅԻ ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԻԶ

Ամբողջ չորս տարի Լազարեը կառավարում է Մեխութուլինի խանութիւնը՝ վերցնելով իր վրայ այդ երկրի որպէս զինւորական – վարչական պաշտօնէութիւնը, նոյնպէս և դատաստանական։ Թաջ ծանօթ լինելով՝ տեղական ադամաներին, շարիաթին և դուրանին, նաև դատաստանական գործը տանում է նոյնպիսի հմտութեամբ և իմաստութեամբ, ինչպէս և երկրի պաշտպանութիւնը։

Լազարեի հոչակը, նրա հեղինակութիւնը օր աւուր աւելի և աւելի տարածւում էր իր խանութեան սահմաններից դուրս՝ Թաղստանի ամբողջ լեռնաշխարհում. այժմ նրա մասին լսել էր և գիտէր ոչ միայն Հաջի Մուրադը, այդ անվախ, համարձակ և նշանաւոր արքեկը, այլև նա ինքը՝ Շամիլը, որին քանի քանի անգամ Լազարեը իր ձիաւորներով դրել էր ծանր պայմանների մէջ և ի գերե էր հանել նրա մի շարք ծրագիրները։

Լազարեի վարչական այս յատկութիւնները մինչ այն աստիճան աչքի են դարնում, որ իշխան Օրբելիանին՝ այդ Մջանի կառավարիչը 1854 թւի մարտ 12-ին Լազարեին նշանակում է Դարգոյի վահնգաւոր շրջանի կառավարիչ, թողնելով նրա իշխանութեան տակ նաև Մեխութիւնի խանութեան կառավարութիւնը։

Թւում էր, որ ոռւս տիրապետութիւնը Դաղստանում



ԳԵՂԵՐԱԼ-ԱՂԻՒՏԱՆՏ ՑՈՎՃԱՆԱԿԵՍ ԼԱԶԱՐԵՅՆ:

օր աւուր աւելի հաստատում ու ամբանում էր. մի շարք լեռնանցքներ բռնւած էին ոռւսաց զօրքի կողմից, խանութիւններից շատերը ոչ միայն նպատակւել էին կառավարութեանը, այլև նրանց տէրերը ջերսեռանդօրէն օգնում էին ոռւս զօրքին. միայն Շամիլն էր, որ դեռ ևս շարունակում էր նեղ վանդակի մէջ բռնւած առիւծի պէս, այս լեռից միւսն անցնել, այս առվից երկրորդը՝ ուժեղացնելու իրենից վորքը առ փոքր ջլատող տարրերին:

Անա ճիշտ այդ օրերին ծագում է ոռւս-տաճկական պատերազմը Ղրիմում ու Ղարսի շրջանում: Կովկասեան փոխարքայ և զօրքերի հրամանատար Վօրօնցովի բացակայութեան ժամանակ նրա պաշտօնակատար գեներալ Ռէազը մի հրամանով պահանջում է իշխան Օրբելիանիից ուղարկել Դավատանում գտնւած զօրքերից չորս բատալիոն գործող բանակ՝ ուժեղացնելու զօրքի թիւը:

Գեներալ Ռէազի այս կարգադրութիւնը իր անհեռատեսութեամբ անդամնալի վտանգի էր Ենթարկելու ոռւսաց տիրապետութիւնը ոչ միայն ամբողջ Դավատանում, այլև ամբողջ Անդրկովկասում, քանի որ բաւական էր ոռւս զօրքի մի մասը գուրս գար այս երկրից, որ տեղացիները, համարելով այդ բանը անզօրութեան նշան և նահանջ, մի շաբթի մէջ, կազմակերպւելով, գուրս վանէին ոռւս մնացած զօրքին այս ահաւոր երկրի բարձրունքներից:

Իշխան Օրբելիանին, ստանալով այս զրութիւնը, իսկոյն խորհրդակցութեան է կանչում երկրին ու իրերի դրութեան հետ լաւ ծանօթ Լազարենին և, երկուսը միասին խմբագրում են մի նամակ գլխաւոր շտաբ, ուր ամեն կերպ զգուշացնում են այզօրինակ չկշռած քայլից:

Բարեբաղգաբար այդ ընդդիմադրութիւնը ունենում է իր ազգեցութիւնը. Դավատանի զօրքը ոչ միայն մնում է իր տեղում, այլ տեղացիներին ցոյց տալու համար, որ ոռւս տիրապետութիւնը երկրում անսասան է, Լազարեր,



գալով իր նոր պաշտօնատեղին՝ Կուտիշի, կառուցանել է տալիս իր համար մի նոր, մեծ, շքեղ և աշտարակներով շըջապատած ամբութիւն:

Այս ձեռնարկութիւնը խսկոյն ազդում է ժողովրդի արամադրութեան վրայ. բոլորն ել համոզւում են, որ ոռւսը ոչ միայն չի հեռանալու Դադսանից, այլ աւելի և աւելի ամբացնում է իր դիրքն ու տիրապետութիւնը այստեղ և... յուղմունքները գաղարում են:

Ահա այդ ժամանակ Լազարել, որպէս վարձատրութիւն իր հեռատես քաղաքականութեան և Դարդոյի շըջանի խելացի կառավարչութեան, ստանում է դնդապետի աստիճան:

5. ԶԵՂՆԱՅԻ ՆԻԱՃՈՒՄԸ

Հետեւալ 1856 թվին Կովկասի Փոխարքայ և զօրքեղիսաւոր հրամանատար է նշանակւում իշխան Ալէքսանդր Բարեատինսկի: Սրա նշանակումը մեծ ոգևորութիւն է առաջ բերում թէ երկրի և թէ զօրքի մէջ. բոլորը գիտէին, որ այժմ Կովկասեան պատերազմը ընկնելու է նոր հունի մէջ, որովհետև նոր փոխարքան ամենածանօթ անձն էր երկրի աւելի քան 30 տարւայ պատմութեան: Եւ ճիշտ որ, իշխան Բարեատինսկին, փոխանակ ցրելու ոյժերը ամբողջ Դադսանում, պատերազմական բոլոր գործողութիւնները միանդամից կենդրոնացնում է անհնազանդ Զեչնայի դէմ նպատակ ունենալով մեծ ոյժերով առաջ գնալ և, Զեչնան նւաճելուց յետոյ, այստեղից արդէն ճանապարհ բացել դէպի Դադսանի խորքերը: Շամիլը իսկոյն համացաւ իրեն սպառնացող վատանգը, ուստի անմիջապէս թողած Դադսանը, իր բոլոր ոյժերը կենդրոնացնում է Զեչնայում դարձնելով այն մի հսկայական քերդ տասնեակ հազար քաջ պաշտպաններով:

Լազարե այդ ժամանակներում իրեն յանձնւած Դարդոյի շըջանում հաստատում է նոր կարգ ու կանոն և զրանով ապահովում երկիրը անսպասելի յարձակութիւններից: Այս բանը առանձնապէս աչքի է ընկնում կառավարութեանը, և ահա չանցած երկու տարի նրան է յանձնւում Դազիկումիկի շըջանի կառավարութիւնը—մի երկրի, որը քառասուն տարիներից ի վեր չգիտէր թէ ինչ է հանդառութիւնը:

Անցնելով իր նոր պաշտօնի գլուխ, Լազարել, հաւատարիմ տեղական աղաթներին, հրատարակում է իր օրէնսդրական կօդէքսը՝ կազմւած ընդամենը 23 յօդւածներից. դրանցում նախատեսնաւած էին այն բոլոր դէպքերն ու յանցանքները, որոնք յատուկ էին այս ժողովրդին: Լազարեի «օրէնսդրութիւնը» ունենում է իր ազդեցութիւնը—ժողովուրդը նրա անձի մէջ գտնելով իր զարնոր սովորութիւններին հաւատարիմ, անկաշառ, քաջ և իմաստուն կառավարչի ու դատաւորի, մինչ այն աստիճան սկսում է յարգել ու սիրել լազարեին, որ երբ նա մի քանի տարուց յետոյ թողնում է պաշտօնը՝ տեղացիները նրան ներկայացնում են շնորհակալութեան մի ինքնօրինակ ուղերձ և խորը ցաւում, որ զրկում են այդպիսի հմուտ կառավարչից:

Ահա այդ ժամանակամիջոցում շնորհիւ իշխան Բարեատինսկու ընտրած տակտիկայի և Դադսանի դէմ գործող զօրքերի հրամանատար գեներալ Եւգոկիմովի ուղարմագիտական տաղանդի, ուստի զօրքին աջողւում է ձեռք ցցել Սրգունի կիբճը, ապա քայլ առ քայլ նւաճելով Մեծ ու Փոքր Զեչնան, մօտենալ ու պաշարել Շամիլի գլխաւոր բանակատեղիին՝ Վեդէնէ բերդը, ուր կենդրոնացած էին Մեծ-Եւնցու բոլոր ոյժերը: Կարճ միջոցում այդ ամբութիւնը չդիմանալով ահազին զօրքերի ուժգին դրուին, նոյնպէս ընկնում է և Շամիլն իր քաջերի մնացորդներով:

դնում է ապաստանելու իր վերջին ամրութեան մէջ՝ Գուշիբ, այդաեղից պաշտպանելու վախճանին մօտեցած իր Էլսանութիւնը:

Ահա այդ միջոցին կառավարութիւնը Դադստանը քաժանում է երեք վարչական շրջանների՝ Հիւսիսային, Միջն և Հարաւային: Լազարե նշանակում է Միջին Դադստանի և կառավարը, և՝ զօրքերի հրամանատար: Նրա տառաջին գործերից մէկն է լինում, որպէս գեներալ Մանիւտինի զօրքերի տռաջաւոր հեծելազօրքի գլխաւորի, մասնակցել Խունդախի վրայ ձեռնարկած մեծ արշաւանքին: Վերցնելով Բուրունդուկալի նշանաւոր ձորամէջը, նրա վրայ գտնաւած հղօր բերդով ու աւերելով պատնեշներն ու ամրութիւնները, զօրքը առանց ընդդիմադրութեան արշաւում է Աւարիայի յայտնի Կօյսուի վրայով գէպի գոռ Խունդախի, որը լեռնականների ամենաառաջնակարգ ամրութիւնն էր:

Ռուս զօրքի ունեցած այս յաջողութիւնները բոլորով վին յուսահատեցնում են որպէս Աւարիայի, նոյզէս և Կօյսիրուկինի շրջանի ազգաբնակութեանը. և ահա մենք վկայ ենք լինում, թէ ինչպէս մինչ այդ գոռոզ ու մոլեսանդ միւրիդները հարիւներով գալիս են ոռւս ընակատեղի և իրանց հպատակութիւնը յայտնում: Զի անցնում մի շաբաթ և գեներալ Մանիւտինին ներկայանում են Կիւնուն և Գերգերիլ բերդերից պատգամաւորութիւններ, որոնք յայտնում են, որ բերդապահ զօրքը պատրաստ է առանց ընդդիմադրութեան անձնատուր լինելու:

Սյստեղ ահա իմացւում է, որ Շամիլը, թողւած իր հազարաւոր զինակիցներից, տունը քար ու քանդ եղած ու ասպատակւած հէնց լեռնականների կողմից, իր ընտանիքով և մօտ չորս հարիւր միւրիդներով քաշւել է Գունիբ:

6. ԳՈՒՆԻԲԻ ԱՌՈՒՄԸ ԵՒ ՇԱՄԻԼԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

1859 թւի օգոստոսի կէսին ոռւս զօրքը իշխան Բարեատինսկու առաջնորդութեամբ պաշարում է Գունիբը: Ժողոված իր շուրջը իրեն մինչեւ վերջին բոպէն հաւատարիմ մնացած միւրիդներին, Շամիլը փակւել էր անառիկ Գունիբի ապառաժոտ բարձունքների վրայ և զբած սրբաշտաբիներին երեք թնդանօթներ, որոշել էր կռւել մինչև վերջին շունչը: Սակայն առաջ քան Գունիբի գրուն սկսելը իշխան: Բարիատինսկին Լազարեին ուղարկում է Շամիլի մօտ առաջարկելու, որ նա թողնի յուսահատ ու անօգուտ կռիւր և անձնատուր լինի: Լազարեի հետ տեսակցում է Շամիլի որդին՝ Ղազի-Մահմետն: Ռուսաց առաջարկները չեն ընդունում Շամիլը, այն ժամանակ իշխան Բարեատինսկին հրամայում է զբոհով առնել բերդը: Օգոստոս 25-ի գիշերը ոռւս զօրքին աջողում է բարձրանալ լեռան գագաթ և կատաղի կռւել յետոյ վերցնել Գունիբը՝ միւրիդիզմի այս վերջին յենակէտը: Շամիլն այս կռւում կռցնում է առանց այն էլ փոքրաթիւ զինակիցներից հարիւր հոգի և ինքը մնացած կարիճներով ու իր ընտանիքով փակւում է մի բարձրագիր առւլի մէջ, վըճուծ լինելով մենակ սուրը ձեռին:

Նկատելով այս յամառ և անմիտ ընդդիմադրութիւնը, բարոն Վրանգել ուղարկում է Շամիլի մօտ պատգամաւորներ, առաջարկելով թողնել կռւելու միտքը և անձնատուր լինել, հակառակ գէպքում նա սպառնում է հրամայել սկսել զրոհը և աւերել Շամիլի տունը և նրա մէջ գտնաւածներին:

Սյժմ ահա Շամիլը տեսնելով, որ ամեն կողմից յոյսերը կռած են, սւղարկում է յայտնելու Բարեատինսկուն, որ ինքը համաձայն է ոռւսների հետ... հաշտութիւն կապելու: Նրան ասում են, որ այժմ խօսքը ոչ թէ

հաշտութեան մասին է, այլ ոռւս թագաւորի ողորմածութեան, ուստի և հրաման է արձակւում պատրաստել անմիջական գրոհի: Շամիլը, ստանալով այս պատրաստանը մարդ է ուղարկում ասելու Բարեատինսկուն իր միակ ցանկութիւնը՝ բանակցութիւնների համար ուղարկեն իր մօտ միմիայն Լազարեն:

Լազարե գնում է մէն-մէնակ, վերցնելով իր հետ միայն մի անձ, որը պէտք է բարոն Վրանգելին տեղեկութիւններ բերէր: Մանելով այն առւլը, ուր գոնուում էր Շամիլը, Լազարե մի ընդարձակ բակի մէջ տեսնում է մի խումք զինւած միւրիդներ, իսկ նրանցից քիչ հեռու, թամքած ձիու մօտ, մտախոհ ու խոժոռ գէմքով մի բարձրահասակ անձ: Արա հագուստից, զլիի սպիտակ չալմայից՝ Լազարե խկոյն ճանաչում է Դավատանի գոռ խմամին: Շամիլին: Հասարակ խանչալը առջից, թուրք կողքից քաշ և երկու ատրճանակները զոտիի վրայ խրած ու պատրաստ, կարմիր սաֆեանի կօշիկները ոտքերին, պարզ հագուստով Շամիլը իր վշտի հետ և վեհ էր և ողբերգական: Առանց ցոյց տալու, որ ինքը ճանաչում է Շամիլին, Լազարե գիտում է միւրիդներին՝ խնդրելով տանել իրեն Շամիլի մօտ: Երբ գալիս է նրա գէմ, յարգանքով բարեւում է և կանգնում նրա առաջ: Տիրում է մի երկար և ծանր լուսիւն, որը առաջինը խղում է Լազարել:

— Շամիլ, ամբողջ աշխարհը գիտէ քո քաջագործութիւնները, որոնք, քանի գեռ կանգնած են այս լեռները, չեն մեռնի նրանց մէջ: Հնագանդւիր բաղդի ոյժին և ապահնիր թագաւորի մէծահոգութեանը. զրանով գու կը փրկես հազարաւոր մարդկանց, որոնք հաւատարիմ են մնացել քեզ քո անբաղդութեան օրերում: Այդ հազարաւորի մէջ միայն միւրիդները չեն—նրանք քիչ են, բայց այստեղ կան խաղաղ մարդիկ, երեխաներ և կանայք: Նըրանք արժեն, որ իրենց անսահման հաւատարմութեան

համար դու գոհես քո հպարտութիւնը: Ցոյց առներ, որ դու մեծ ես որպէս բաղդաւորութեան, նոյնպէս և անբաղդութեանով ժամանակ և կարող ես լույսեայն և քաջաբար տանել Բարձրեալի որոշումը: Յանուն Աստուծոյ, Շամիլ, մի ուշացրու, արի գնանք:

Շամիլը լսում է այս խօսքերը և լսում. անշուշտ, եթէ ինքը մենակ լինէր և իր քաջերով, նա կըմեռնէր զէնքը ձեռքին. բայց այստեղ կար նրա ընտանիքը, որին այն քան սիրում էր ծերունի գօրապետը:

— Եթէ վստահ ես, որ ոռւմները ինձ հետ վատ չեն վարւիլ, ուրեմն գնա իմ որդկերանց մօտ և մնա նրանց հետ մինչև ես վերադառնամ:

— Ես եկել եմ այստեղ քո ցանկութեամբ, որ միամին գնանք հրամանատարի մօտ և ոչ թէ որպէս պատանդ: Եթէ ուղում ես, գնանք միասին, եթէ ոչ՝ ես կդնամ մէնակ:

Այս լսելով միւրիդները դժգոհ առաջ են անցնում, ցանկանալով շրջապատել Լազարեին: Լազարե խկոյն բորբոքում է և ահեղ ձայնով ստիպում նրանց յետ-յետ քաշւել. և ապա, դասնալով Շամիլին, ասում է հանդիստ:

— Այս մարդիկ գէպի քեզ ունեցած իրանց կոյր անձնանուիրութեան մէջ չգիտեն ինչ են ասում և ինչ անում: Ինչի՞ են սրանք ուղում, որ կորչես գու և քո երեխաները: Զէ՞ որ վրանց կեանքն ու ազատութիւնը այժմ քո ձեռքին է: Վճոբիր, Շամիլ, եթէ ոչ ուշ կլինի:

— Իսկ գու երաշխաւո՞ր ես, որ ինձ թոյլ կըտրւի նորից վերագանալ իմ ընտանիքի մօտ:

Լազարե տալիս է այդ երաշխաւորութիւնը:

— Լաւ, ասում է Շամիլը, ես կըդամ միայն մի պայմանով, որ գնալիս իմ ճանապարհին և բանակում ես չըտեսնեմ և ոչ մի մուսուլման. ես չեմ ուղում տեսնել

այն մարդկանց, որոնք ինձ դաւաճանեցին անբաղդութեանս մէջ:

Այս խնդիրը կատարւում է, հրաման է արւում, որ տեղացիներից կազմւած միլիցիան յետ քաշւի ռուս բատալիոնների թիկունքում: Եթի այդ էլ կատարւում է, Շամիլը լուր նառում է ձին կազարեկի հետ և, շրջապատւած հրացանները պատրաստ պահած քառասուն միլիցիներով, դուրս է գտնիս իր առողից:

Եթի ռուս զօրքը դեռ հեռւից տեսնում է եռեսնամեաց պատերազմի այս հզօր հերոսին ռուս բանակ գալիս, որ այստեղ յաղթողի ուների տակ վայր գնի իր զէնքը, ուրախ ու հապարտ «ուռա» է գոռում:

Իմամը զայրացած իսկոյն շուր է տալիս ձիու զլուխը՝ պատրաստելով յետ գնալ. սակայն ըուպէն փրկում է կազարեկի հնարագիտութիւնը. նա հաւատացնում է Շամիլին, որ այդ «ուռա»-ն արժանի յարգանքի նշան է ռուս զօրքի կողմից Շամիլին: Այս բացարութիւնը հանգստացնում է Շամիլին և նա համաձայնում է շարունակել իր ձամբան:

Եթի զնացքը մօտենում է զօրքին, գեներալ Վրանգել, որ որպէս զօրքի հրամանատար կանգնած էր նրա առջե, առաջինն է լինում, որ ողջունում է Շամիլին և յայտնում, թէ չնայած, որ մինչև այժմ ուռուները նրա թըշնամին էին, բայց այժմ նա յանձին ուռուների կդանի իր ամենալաւ բարեկամներին: Մնում էր ամենից դժւարինը, ներկայացնել Շամիլին հրամանատարին. սակայն մէն-մէնակ, առանց միլիցիների, որոնք իրանց կատաղի հայեացքներով, թւում էր, թէ ամեն ըուպէ պատրաստ են արիւնալից կոտորած սկսել:

Այս միստիան վերցնում է իր վրայ կազարեկը համոզելով Շամիլին, որ նա իր զինւած միլիցիներին թողնի հեռուում և ինքը մէնակ ու անզէն ներկայանայ իշխանին,

քանի որ նա ոչ մի զէնք ու թիկնապահ չունի: Շամիլը համոզւում է և, հրամայելով միլիցիներին մնալ այդտեղ, ինքը մենակ կազարեկի հետ առաջ է գնում: Սակայն գեռչնասած Բարեատինսկուն, յայտնում են նրան, որ զէնք քերը ևս վայր գնի, սակայն կազարեկը համարելով այդ կարող մար, մանաւանդ որ միլիցիները տեսնելով այդ կարող էին միջամտել, ամբողջ պատասխանատւութիւնը առնելին իր վրայ, Շամիլին տանում է զլիսաւոր հրամանատարի մօտ զէնքերը վրան:

Կանգնելով իշխան Բարեատինսկու դիմաց, Շամիլն ասում է.

— Սարդար, երեսուն տարի, որպէս այս լեռների գաւակ, ես կուել եմ իմ հայրենիքի պաշտպանութեան համար. բայց հիմտ իմ ժողովուրդները դաւաճանեցին ինձ և վախան. բացի այդ ես էլ հոգնել եմ կոփներում. ինձ ծեր եմ, 63 տարեկան: Շնորհաւորում եմ, Սարես ծեր եմ, 63 տարեկան: Շնորհաւորում եմ, Սարեսին նրանց սեփական յաջողութեան համար:

Նոյն գիշեր Շամիլին տանում են բանակ, իսկ կազարեկը պատում է առող բերելու Շամիլի ընտանիքը, դա կարել պատում է յաջորդ օրը:

7. ԼԱԶԱՐԵԿԻ ՈՐԳԵՍ ԴԱՂՍՑԱՆԻ ԿԾՈԱՎԱՐԻՉ

Այսպէս ընկնում է Շամիլը և դրանով աւարտւում է Արևելեան կովկասի տիրապետութիւնը: Դաղստանը վարչականութիւնում է չորս մասերի, վերջինի մէջ չականապէս բաժանուում է չորս մասերի, վերջինի մէջ ընկնում է նոր նւաճած Գունիբն իր պշանով:

1860 թւի մարտի 6-ին Բարձրագոյն հրամանով գերերալութեան աստիճան ստացած Յովհաննէո կազարե

նշանակւում է այս անդամ արդէն Դաղստանի կառավարի:

Այժմ ահա, երբ գործունէութեան ասպարէզը մեծ
չափով լայնացել էր, Լազարեի համար բացւում է ստեղծ-
ծագործական աշխատանքների շրջան այն երկրներում,
որը երեսնամեայ անդադար պատերազմներից յետոյ կա-
րիք ունէր շատ ու շատ բարեկարգութիւնների: Պարզ է,
որ Դաղստանի ու Զեջնայի նման երկրում ժողովուրդը
միանգամից չէր կարող խաղաղել, գեռևս այստեղ ու
այստեղ բռնկւում են մանր ու խոշոր դժոհութիւններ,
որոնք երբեմն լուրջ ընդհարումների են փոխում, բայց
դրանք այսպիսի միջնադէպքեր են, որոնց Լազարե վերջ
էր տալիս յենաւծ երկրի ու ժողովրդի տեղական ոյժերի
վրայ՝ առանց զինւորական տնօտենութեան և ի առաջ ան-

Հ Ա Ր Ա Բ Ա Վ Ա Կ Ա Ս Ա Ր Ո Ւ Մ Մ Ի Ջ Ո յ Ն Ե Ր Ի Պ Բ Ի Մ Ե Լ Ո ւ :
Ըսդհանրապէս շեշտակու է, որ Լազարիը ահապին
նշանակութիւն էր տալիս տեղական ադամքներին, ժողո-
վրդի գարևոր աշխարհայեցքը բին, և այդ բոլորը ամեն
կերպ աշխատաւմ էր հաշտեցնել պետական նոր օրէնքնե-
րի, կարգ ու կանոնի հետ: Հակառակ լինելով տեղական
խանութիւններին, որպէս ժողովրդին կեղեքող մի իշխա-
նութեան, նա գերագասում է երկրի տեղական խնդիրնե-
րը առաջ տանել ժողովրդի մէջ արմատացած ընտրական
սիստեմով, ուստի վարչական մասը տանելով իր ձեռքը,
ներքին խնդիրներում նա առաջ է քաշում տեղական աղ-
գաբնակութեան մասնակցութիւնը: Պարզ է, որ այս ա-
ռողջ քաղաքականութիւնը դուք չի գալիս տեղական իշ-
խանութեանը՝ խաններին, բէկերին և ընդհակառակը մեծ
համակրութիւն է գտնում հասարակ ժողովրդի մէջ: որոնց
համար Լազարիկ ցանկութիւնը, նրա գրած կարգերը ստա-
նում են օրէնքի ոյժ:

Կազմակերպությունը Պաղստանում Շամբիլի-
անկումից յետոյ տևում է ութ տարի, որի ընթացքում

Նա ամենաաչքի ընկնող վարչական անձի անուն է ստա-
նում և դրա համար պարզեատրում 1861 թւին Ստա-
նիսլաւի Լին աստիճանով, յաջորդ տարում Վագիմիրի Արդ-
աստիճանով՝ և ապա Աննայի Լին աստիճան բարձր շքանը-
շանով:

8. ԽԱԶԱՐԵԿԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Հետաքրքիր է, որ պաշտօններից հեռացած է 1811
թվականը, եթե Դադուան է գալիս Ալէքսանդր Արդ կայսրը
և նրան ներկայանում է Լազարե, կայսրը, գտոնալով Լա-
զարեին, ասում է.

Այսպէս, հեռու գործերից ու ներգործական գերից,
Լազարի մնում է ամբողջ 9 տարի, մինչև որ 1877 թվան
նորից հնչում են պատերազմական փողերը և Լազարի
այս անդամ նորից հրապարակ է գալիս ցոյց տալու իր
արտակարգ ընդունակութիւնները որպէս հազւագիւտ ուղ-
մագէտ և վարչական անձ:

Այս տարիները կազմում են Հազարի ու ազմական գործունէութեան ամենափայլուն շրջանը:

ԵՐԿՐՈՐԴ ՄԸՆ
ԼԱԶԱՐԵԽԸ ՌՈՒՍ-ՏԱԶԿԱՎԱՆ ՊԱՏԵՐԱԶ-
ՄՈՒՄ

9. ԳԵՆԵՐԱԼ ԼԱԶԱՐԵՎԻ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԱԿ ԳՆԱԼԻ

1877 թւականն էր։ Մուս կառավարութեան յարա-
բերութիւնները Տաճկաստանի հետ օր օրի վրայ սրւում
և սպառնալից էին դառնում։ Երկու պետութիւններն էին
պատերազմ յայտարարելուց 6—7 ամիս առաջ, ուստի փուս
պատրաստում էին պատերազմի համար։ Երկու կողերն
էլ զօրք, ուազմամթերք էին ժողովում, ամրացնում էին
լրենց գիրքերը։ Երկում էր, որ պատերազմը անխուսա-
փելի էր։ Կովկասեան բանակը կազմում էր։ Գեներալ-
ադյուտանտ Լորիս-Մելիքով արդէն նշանակւած էր թիւր-
քաց դէմ Գործող Բանակի կորպուսի հրամանատար^{*)}։ Օր
օրի վրայ զալիս հաւաքւում էին իրենց պաշտօնատեղերը
բոլոր գեներալները, օֆիցերները, և միայն Լազարեն էր,
որ, հեռու գործից, նստած Բագում կարգում, տեսնում
էր այդ բոլորը և իր հոգու խորքից վըգովում էր իր ա-
կամայ անգործութեան համար։ Եւ դա շատ հասկանալի
է։ Մի մարդ, որ իր կեանքի երեսունինգ տարիները շա-
րունակ անցրել է կոխուների մէջ, մի զինուրական, որը
ապրում ու շնչում էր լի կրծքով միմիայն հրացանների և
թնդանոթների զարկերի տակ ու նրանց թանձր ծիփ մէջ,

մի զօրապես, որի ետևից անվախ ու համարձակ կը ակի
մէջ էր նետում նրան պաշտող զինւորը ու սրս առաջ-
նորդութեամբ հրաշքներ էր գործում, այսօք՝ այս ցան-
կալի օրը, այդ զօրապետը հանգամանքի բերմամբ լուռ
հանգիստես պէտքէ լինէր այն բոլորի առաջ, ինչ որ կատար-
ւում էր նոյն բանակում, որի ողին ու զգայուն նեարդն
էր եղել նա տամնեակ տարիներ...

Եւ չի համբերում Լազարիի սիրտը. նա անմիջապէս
մի նամակով գիմում է Փոխարքայի օգնական իր բարե-
կամ իշխան Սվեատօլկ-Միլսկուն. նամակի մէջ յայտ-
նելով իր ջերմ ցանկութիւնը ծառայելու թիւքքաց դէմ
կուող ուսու բանակում, Լազարի, ի միջի այլոց, գրում է
նրան.

«Ես չեմ ուզում, որ ինձ մի զօրամտու յանձնեն կամ նոր պաշտօն տան. ոչ. այլ ես փափագում եմ, որ հնար արւելի ինձ հին զինւորիս մտնել որիէ բատավիոնի մէջ լոկ որպէս հասարակ զինւոր՝ իմ ընկեր զինւորների հետ կողք կողքի թշնամու դէմ գրոնի մտնելու և զրանով գո- նէ կատարելու այն երգումը, որ տւել եմ իմ մեծ թա- գաւորին»:

Սակայն նրա այս փափագը շուտով չէ կտտարւում:
1877 թվի ապրիլ 12-ին տաճիկների դէմ պատերազմը
յայտաբարւած էր և պատերազմական գործողութիւններն
սկսւած։ Թուս զօրքերը երեք կողմից մտել էին թիւր-
քաց սահմանները, վերցւած էր արդէն Արդանանը, գենե-
րալ Տէր-Ղուկասեանը իր զօրքի հետ անցել էր Ալաշկեր-
տի հովիտը և Մուխտարի ոյժերին Դրամ-Դաղի վրայ փա-
ռաւոր ջարդ էր տւել. կորպուսի զիստոր ոյժերը Լօրիսի
հրամանատարութեան տակ պաշարել էին անառիկ Ղարսը և,
արշաւելով դէպի էրզրում, անաջող կոփւ էին ունեցել
Զիւինի մօտ ու յետ նահանջում ։

^{*)} Տես «Ծուսատաճկական պատերազմ» և զեներալ-ադյուտանութիւնը՝ Արքա-Մելիքով» գրքի երես 25—38:

բազմական գործողութիւնների ծրագիրը. խօսում էին
նոր գործելակերպի մասին, երբ ահա այդ միջոցին մտա-
բերում են Դադուտանի պատերազմների հին առիւծին՝ գե-
ներալ Լազարին: Եւ ահա 1877 թվի յունիս 28-ին Մեծ
իշխանի կողմից նա հրաւիրում է Գործող Բանակ և նը-
շանակւում է Թիւրքիայի մեր սահմանակից չորս գաւառ-
ների զօրքերի հրամանատար ու սահմանապահ՝ գեներալ-
գուրենատորի իրաւունքներով:

Այս նոր պաշտօնը որքան և ըստ երեսյօթքս փայլուն
չէր, սակայն ըստ էռովիկան նա շատ պատասխանատու
էր: Մեր սահմանակից գաւառներում ապրող քիւրդ և
թուրք ազգաբնակութեան մէջ փառ էր ներքին հա-
մակրութիւն գէպի տաճիկները ու սրանց յաղթութիւնը,
ուստի այդ ազգութիւնները աշկարայ թէ գաղտնի օգ-
նում էին թուրք զօրքին ինչով որ կարող էին: Միաժա-
մանակ նրանք թալանում ու աւերում էին թիւրքաց սահ-
մանի մօտ գտնւած հայ և յոյն գիւղերը, վասում էին
ուսու զօրքին, նրան հաց ու մթերքներ մատակարարող
սայլախմբերին և մեծապէս գժւարացնում էին նաև վիրա-
ւորների վոխադրութեան գործը:

Ահա այս ժամանակ գեներալէյտենանաւ ու կտրուկ ստանձնելով իր նոր պաշտօնը, ամենախիստ ու կտրուկ միջոցներ է ձեռք առնում վերջ դնելու այդ բոլոր ասպատակութիւններին: Նա անմիջապէս զինում է այդ շրջանի հայ ազգաբնակութեանը, կազմակերպում է նրանց թռուցիկ ինքնապաշտպանողական խմբեր, ապահովում է դրանով տեղացիներին և միաժանակ ամենախիստ կերպով հսկում է, որ ոռուսաց բանակին չպակասեն ոչ զայլեր, ոչ մթերք, մանաւանդ կարգադրում է, որ մեր զօրամասերի առաջիւազացումը չհանդիպի որևէ արտաքին վտանգի՝ տաճիկ ու քիւրդ ազգաբնակութեան կողմից սահմանադի 400 վերստ բռնող շրջանում:

10. ԱՆՁԱՐԵԼԻ ԵԱՂՆԻԻ ԵՒ ԱՀԼԻԱՐԻ ԿՌԻՌՈՒՄ

Որքան և եռանդուն լինէր գեներալ Լազարեկի գործունէութիւնը իր այս նոր պաշտօնի մէջ, սակայն դա այն չէր, որի համար ստեղծւած էր և որին նա փափագում էր: Նրան, որպէս սազմական զօրապետի, հարկաւոր էին զուտ սազմական գործողութիւններ՝ թշնամուբանակի հետ ճակատ առ ճակատ. ահա այստեղ էր, որ Լազարե կարող էր իր ետևից աննել ոգեսրւած գնդեր ու գումարտակներ. դրան էր ձգտում սազմական գեներալը, այդ տեսչն էր նրան բերել գործող բանակ: Եւ նա շուտով հասնում է իր իդին:

Օգոստոս 20 ին գեներալ Լազարե կանչւում է Լորիսի մօտ՝ գլխաւոր բանակ և այստեղ նշանակւում է կորպուսի առաջապահ զօրամասի հրամանատար՝ գեներալ Դէվիլի տեղ, որը ուղարկւում է իդին՝ գեներալ Տէր-Դուկասովին օգնական:

Պէտք է ասել, որ երբ Լազարե ստանձնեց այս պաշտօնը, ուու գործող բանակի գլխաւոր ոյժերը բաւականին ծանր կացութեան մէջ էին գտնւում:

Թիւրքաց զօրքերի գլխաւոր հրամանատար Սուխասար փաշան իր 60 հազարանոց բանակով, որ թւով գերազանցում էր ուուսաց համեմատաբար փոքրաթիւ ոյժերին, թողած Ղարսի բերդը, ուուրս էր եկել ու բանակ զրել Ղարսի ու Ալաջայի լեռների միջև գտնւող ամբողջ բարձրագիր շրջանի վրայ՝ ամենախիստ կերպով ամրացնելով այդ դիրքերը. իսկ ուուսաց փոքրաթիւ զօրքը, վախենալով իր թիկունքից, յետ ու յետ էր գնացել և, մօտենալով Ալէքսանդրապօլին, հազիւ պաշտպանում էր իր անաջող գիրքերը Կարաեալի մօտերքում: Լուրջ կերպով վտանգ կար, որ Սուխասարին կաջողւի անցնել Արփաչայը կողպի վրայով և, միացնելով իր ոյժերը իդինը մօտ դարն-



Վակիտանան Զօրքաբանուի գլխաւոր հրամանատար Մեծ-Խելատն
Միհեթի, Նիկոլայի թիւրքի:

ւած իսմալիլ փաշայի զօրասիւնի հետ, ոտքի կհանի Երեւանի նահանգում ապրող թուրքերին ու քրդերին և դրանց հետ միասին կարշաւի Թիֆլիզի վրայ:

Այդ վտանգաւոր ծրագիրը է չիք դարձնելու համար հարկաւոր էր ինչպէս և լինէր կուի հանել Մուխտարին հէնց այստեղ՝ Ալաջայի մօտ ու, ջարդելով թիւրքաց բանակը, յետ քշել նրան դէպի Սողանլուխ-Երզրում տանող գիծը:

Լազարեի գործող զօրաբանակի մէջ մտնելը մեծ ոգեսրութիւն է առաջ բերում ուսւաց բանակի մէջ. բոլոր գիտէին, որ իրանց շարքերի մէջ է մտնում և գործի վլուխ է կանգնում մի գեներալ, որը հոչակ է ստացել Դաղստանի գոռ կորուներում և մի մարդ, որը, կարծես, ստեղծւած էր լեռնային դժւար պատերազմներ դեկավարելու և թշնամուց փառաւոր յաղթութիւններ տանելու համար:

Գեներալ-ադիւտանտ Լորիս-Մելիքով, որը բոլոր զօրքերի հրամանատարն էր, անհամբեր սպասում էր Ռուսաստանից նոր օգնական երկու դիւիզիայի գալուն: Նա որոշել էր՝ հէնց որ կզան կհասնեն այդ զօրքերը, ամենա որոշել էր՝ հէնց որ կզան կհասնեն այդ զօրքերը, ամենա բողջ ոյժով յարձակւել Մուխտար փաշայի բանակի վրայ, կտրել Ղարս տանող ճանապարհը և, տալով նրան փառաւոր ջարդ, ստիպել թիւրքաց զօրքին անձնատուր լինելու:

Պարզ էր, որ եթէ Լորիսին յաջողւեր այս ծրագիրը, այն ժամանակ ուսւ զօրքը առանց դժւարութեանց կդնար Երզրումի՝ թուրքաց Հայստանի այդ մայրաքաղաքի վըրայ, ուր այդ ժամանակ համեմատաբար շատ քիչ զօրք կար և որը կազմում էր ուսւ զօրքի կէտ նպատակը:

Ահա այդ պահին, վերջապէս, Ռուսաստանից գալիս հասնում է վաղուց սպասւած օգնական զօրքը մօտ 24000 հոգի իր թնդանօթներով և բոլոր զօրամասերով:

Այժմ միայն, երբ ոռւս զօրքերի թիւը հաւասար էր Մուխթար փաշայի բանակի ոյժերին, որոշեց սկսել կոիւր: Յարձակման օրը նշանակւած էր սեպտեմբեր 20-ին: Ռուս զօրքը բաժանեց երկու գլխաւոր մասի, աջը իրեն՝ Լորիս-Մելիքովի հրամանաւարութեամբ պէտք է յարձակւէր թիւրքաց զօրքի կենդրոնի վրայ և, վերցնելով Մեծ ու Փոքր Եաղնի բարձրութիւնները, կարելու էր Ղարս տանող ճանապարհը, իսկ միւսը՝ ճախ զօրամասը յանձնեց գեներալ Լազարեկին, որը անցնելու էր թիւրքաց զօրքի աջ թեի վրայ և, զրադեցնելով նրան, չպէտք է թոյլ տար, որ այս զօրքը օգնութեան հասնէր այն զօրքին, որի վրայ յարձակւելու էր Լորիս-Մելիքովի զօրամասը: Լազարեկ գործելու էր մեծ մտամբ թնդանօթներով:

Սեպտեմբեր 19-ի գիշերը գեներալ Լազարեկ մօտ 12000 զինւորներոր և 40 թնդանօթներով թիւրքերից դադսնի առաջանում է դէպի Քիւլվերան և այստեղ աննկատելի կերպով բռնում է թիւրքաց զօրքի ճակատի դէմը՝ Դըզըլ-Թափայի և Սուլոթանի առջեւ:

Հուսաբացին ոռւս զօրքի երկու թեերից էլ միաժամանակ սկսւում է թնդանօթային կրակը, որ ուղղւած էր թիւրքաց բանակի վրայ:

Կոիւր սկսւած էր: Գեներալ Լազարեկ իր շտաբով, կանգնած Քիւլվերանի մօտ գտնւած մի բարձր բլուրի վրայ, դիտում էր կուփ ընթացքը:

Մուխթար փաշան շուտով գլխի է ընկնուժ և, նախատեմնելով Լորիսի պատերազմական ծրագիրը, Ղարսից մեծ թւով զօրք է բերում և ուղղում ոռւսաց աջ թեի վրայ, միաժամանակ նա ուժեղացնում է այստեղ թնդանօթների թիւը և զօրեղ կրակով ու հակայարձակումներով ստիպում է Լորիսին յետ տալ վերցրած Մեծ Եաղնին, իսկ մի ուրիշ զօրամասով նա վերցնում է Ալիարի դիրքերը:

Սրանով այսօրայ կուփ ծրագիրը մնում է չիրագործւած և Լորիսը, ստիպւած, յետ է տանում յոդնած զօրքին իր նախկին դիրքերի վրայ:

Այս կոիւր, որ սկսւեց սեպտեմբեր 20-ին, տևեց երեք օր: Լազարեկի զօրամասը երեք օրւայ ընթացքում գործում է մի շարք կատաղի յարձակումներ Մուխթարի աջ թեի վրայ, նա խում է թիւրքերից մի շարք կարեւոր դիրքեր, այդտեղ վչացնում է թշնամու պատերազմական մթերքները և, ահազին կորուստներ պատճառելով, ստիպում է նրան փոխել իր դիրքը և կենդրոնացնել զօրքը այս անգամ արգէն Ալաջայի լեռների վրայ:

Այս երեք օրւայ յամառ կոիւների և կատարած համարձակ գրոհների համար Լազարեկ պարգևատրւում է Սպիտակ Արծւի շքանշանով:

Սակայն այս կոիւները սկիզբն էին միայն այն նշանաւոր յաղթութեան ու ռազմական դժւար ծրագրի իրադարձման, որ մի քանի օր յետոյ կատարեց գեներալ Լազարեկ Ալաջայի ճակատում և որի համար նա մտաւ ոռւս ռազմական նշանաւոր ստրատէգների շարքը, անմահացնելով իր անունը ոռւս բանակի պատմութեան մէջ:

11. Ա.ԶԱՐԵՒԻԾ ԱԼԱՋԱՅԻ ԿՌԻՌՈՒՄ

Սեպտեմբեր 20—23-ի կոիւներից յետոյ Մուխթար փաշան, բոլորովին անսպասելի կերպով, իր բանակը քաշեց Ալաջայի բարձրունքների վրայ, իսկ 27-ին նկատւեց, շեց Ալաջայի բարձրունքների վրայ, իսկ միայն նկատւեց, որ նա այս նշանաւոր դիրքն էլ է ուղում թողնել, նպատակ ունենալով կամ իր բոլոր ոյժերով քաշել Ղարսի բերդը, կամ թէ զօրքը տանել Սողանլուխի վրայ՝ պաշտամնելու էրզրում տանող ճանապարհը:

Այս երկու ենթագրութիւններից որն էլ ուղիղ լինէր՝ միանոյն էր. գրանով թիւրքաց զօրքը հսարաւորութիւն էր

ստանում ոչ միայն անվասս հեռանալ ոռւսաց զօրքերից, այլև, որ պիտաւորն է, նրան նորանոր դժւարութիւնների դուռ էր բացում։ Այդ բանն էր ահա, որ չպէտք էր թոյլ տալ։ Ուստի ոռւսաց բանակում մշակում է մի համարձակ ծրագիր, որի պաշտպանը գեներալ Լաղարեն էր։ Այդ ծրագիրը կայանում էր հետեւալում. մի մեծաթիւ զօրամասով, որ վերջնելու էր ինքը գեներալ Լաղարե, շրջել թշնամու աջ թեր և համեմելով Օրլոկի բարձունքներին, աննկատելի կերպով մտնել թշնամու բանակի թիկունքը, և այդ ժամանակ ճակատից ու թիկունքից միաժամանակ յարձակւելով Մուխթարի բանակի վրայ, նրան ստիպել վճռական կուի, որի ժամանակ հեշտ էր ջարդել թշնամու ոյժերը։

Այս ծրագրի գլխաւոր գաղտնիքը նրան որքան կարելի է կարճ միջոցում գլուխ բերելու մէջն էր, քանի գեռ թիւրբաց զօրքը չէր կարողացել մտնել Ղարս կամ թէ չէր անցել նրանից հարաւարևմուտք՝ դէպի Սովանլուխ:

Եւ ահա սեպտեմբեր 27-ի գիշերը գեներալ Լազարեանցած իր մօտ 20 հազարանոց զօրասովունի գլուխ, ունենալով 80 թնդանօթներ, անցնում է Արքաչայ գետը, ուղղվելու Նեղաջի վրայով դէպի Օրլոկ։ Նա, այդ պրշատին շտավելով, ժամանակ չունեցաւ տանել իր հետ նոյն իսկ զօրքին անհրաժեշտ պաշարը, որ բերւելու էր յետոյ։

Թղթի վրայ 80 վերստ երկարութիւն ունեցող այս
ճանապարհը շատ հեշտ էր թւում, սակայն իրականու-
թեան մէջ նրան կտրել ու անցնելը հանդիպեց մի շարք չը-
նախատեսնւած արգելքների. և Լազարեի զօրամասը մի
օր կորցնելով, հազիւ սեպտ. 30-ին հասաւ Ղեղաջ և այս-
տեղ մի օր սպասելով պաշարի, միմիայն հոկտ. 1-ին հա-
սաւ տեղ՝ թողնելով իր ետևում զօրքի ուտելիքի պաշարը:

Թշնամին պարզօքէն տեսնում էր Լազարիկ շարժումը, սակայն չէր կարողանում հասկանալ նրա բուն նպա-

տակը, այլ այս բոլորը համարում էր լոկ պատերազմական մի երեխայամիտ խորամանկութիւն:

Մինչ այդ Լօրիս-Մելիքով սպասում էր Լազարեի զօրքին Օրլովի մօտերքում սեպտեմբեր 31-ին. այդ օրն էլ նշանակւած էր յարձակում գործելու Մուխտարի բանակի վրայ ճակատից: Լօրիսը նշանակւած օրը չտեսնելով Լազարեի զօրամասը իր տեղում, մեծ անհանդըստութեան մէջ ընկաւ, ուստի չսպասելով, որ Լազարեի զօրամասը երեայ իր դիրքերում Օրլովի վրայ, համաձայն դիսպօզիցիայի սկսում է կոփւը ճակատից:

Չափազանց անհանգիստ էր և ինքը կազմու՝ ժամանակին իր նշանակւած տեղում չլինելու համար. մանաւանդ նա վախենում էր, որ իր ծրագիրը կարող է իմանալ Մուխթար փաշան և միջոցներ ձեռք կառնէր խափանելու այն, որով մեծ հարւած կհամնէր ոչ միայն իր՝ կազմով ուղղմագիտութեանը, այլ զբանից կարող էր մեծապէս մնասւել զօրքը և միաժամամակ ամբողջ գործը Եւ ահա, որպէսզի Մուխթարին սխալանքի մէջ գցի, նա զիմում է պատերազմական խորամանկութեան—հրաշիրում է իր մօտ Դիգորի մօլլային, որի մասին գիտէրում է իր մօտ Դիգորի մօլլային, որի մասին գիտէր, որ սա գաղտնի կերպով յարաբերութեան մէջ լինելով Մուխթար փաշայի հետ և սրան տեղեկացնում է ոռւս զօրի ամեն մի շարժման մասին:

Հրաւիրելով մօլլային կէս գիշերին իր վրանը, Լազարեա ապացուցանում է մօլլային, որ վերջնական յաղթութիւնը տանելու հն ուստաները, ուստի և ասում է նըրան, որ այս մարդը, ով լաւ կծառայի ուսւս գօրքին—նաև իւսուչառութիւն կստանալ իրանից:

— Բայց ի՞նչ ծառայութիւն էք ուզում ինձնից, հարցնում է մօլլան Լազարեին:

— Հարկաւոր է, որ մի լաւ վայսդ մեր զօրքին ցոյց
տայ Ալաջա տանող ամենակարճ ճանապարհը, որով և

մենք կմտնենք թիւրք ամրութիւնները նրա ետևից։ Ասայ մօլլա, հարցնում է Լազարե, գիտե՞ս դու այդպիսի մի ճանապարհ և կարելի՞ է նրանով թնդանօթներ տանել։

— Ճանապարհ, գեներալ, կայ, թէկ դժւար է, բայց թնդանօթներ տանել կարելի է, պատասխանում է մօլլան։

Լազարե ցոյց է տալիս, որ շատ ուրախ է այդ բանը լսելով, և իսկոյն մոլլայի ձեռքն է դնում մի բուռ ոսկիներ։

— Գնա, մօլլա, սակայն ոչ ոքի ոչ մի խօսք չասես, իսկ երբ դու ինձ հարկաւոր կլինես, ես քեզ իմաց կտամ որ դաս և ցոյց տաս մեզ այդ ճանապարհ։

Ի հարկէ, մօլլան այս ամբողջ խօսակցութիւնը հաղորդում է Մուխթար փաշային։

Առաւօտեան Լազարե տեսնում է, որ թիւրք զօրապետը, հիմնելով մօլլայի տւած տեղեկութիւններին, եռանդուն կերպով ամրացնել է տալիս Ալաջայի բարձունքների այն մասը, որը ուղղւած է Դիգորի կողմը։

Լազարե իսկոյն մարդ է ուղարկում մօլլայի ետևից, և, ցոյց տալով շինւող ամրութիւնները, մօլլային առաջարկում է այժմ ցոյց տալ իրան մի ուրիշ ճանապարհ Ալաջա բարձրանալու համար։

Մօլլան խորամանկօրէն առաջարկում է գրոհով վերցնել Ալաջան, Լազարեը հաւանութիւն է տալիս և մօլլային տուն ուղարկում։

Մօլլան նորից յայտնում է Մուխթար փաշային Լազարեի մտադրութիւնը։

12. ՀԱԶԱՐԵԻԻ ԹԻԿՆԱՆՑ ՇԱՐԺՈՒՄԸ

Այսպիսի խորամանկութիւններով Լազարեին աջողութ է հաւատացնել Մուխթարին, որ իր զօրամասը նը-

պատակ ունի գրոհ տալ Ալաջայի դիրքերի վրայ Դիգօրի մօտից. դրանով գաղտնի է պահուում արշաւանքի իսկական նպատակը, այն է շրջել Ալաջան և մտնել Մուխթարի թիկունքը Օրլոկի բարձունքներից, որտեղից Մուխթարը ոչ մի յարձակում չէր սպասում, ուստի և այդ մասը չէր էլ ամրացնում։ Միայն հոկտեմբեր 2-ին, երբ Լազարեի զօրամասի առաջապահ գնդերից երեսում են Մուխթարի բանակի թիկունքում՝ Օրլոկի բարձունքներում, թիւրք զօրքի գլխաւոր հրամանատարը հասկանում է Լազարեի արշաւանքի գլխաւոր նպատակը և սկսւած կռւի դաշտից մեծ թւով ոյժեր է բերել տալիս այդ կողմ Շաթիր-Օղիի դիրքերի վրայ։ Հէնց այդ էլ հարկաւոր էր Լազարեին։ Նախ ըսմն Մուխթարին կյաջողւէր իր զօրքը քաշել բերել այդ դիրքերի վրայ, նա մեծ ոյժով ու արագութեամբ այդ դիրքերի վրայ, նա մեծ ոյժով ու արագութեամբ այդ դիրքերի վրայ, կատաղի կռւի մտնելով Մուխթարը եկող ոյժերի դէմ, ջարդում է դրանց ու որի ու կրակի տակ փախուստի մատնում։

Մինչ այդ, պատերազմի ճակատում կռիւը արգէն երկու օր առաջ սկսւած էր։ Թիւրքերը, օգտելով իրանց գերազանց զիրքերից, կատաղի յարձակութիւն էին զործում գեն։ Հէյմանի զօրամասի վրայ։ Լօրիսը ժամ առ ժամ սպասում էր Լազարեին, որ սա իր զօրքով երեայ Մուխթարի թիկունքում և սրա ոյժերը դէպի ինքը քաշի։ Հեռագրաթելը, որ միացնում էր Լազարեի բանակը Լօրիսի բանակի հետ, թուրքերը կտրում են և լօրիսը ոչ մի ուղեկութիւն չունենալով Լազարեից, վճռում է ինչ և առաջ տանել կատաղի կռիւը. ահա այդ պահին, հոկտեմբերի 4-ին Մուխթարի բանակի ետևից լուսում է ուռ զօքի ուռաների ձայնը։ Դա Լազարեի զօրամասն էր, որը, գրաւելով դէպի ինքը Մուխթարի զօրքերի մեծ մասը, կատաղի յարձակում էր գործում Մուխթարի բանակի թիկունքում և, խրւելով նրա մէջ, աջ ու ձախ հնձում էր

զօրքերի գնդերը։ Սա կուի վճռական վայրկեանն էր։ Հէյմանի զօրքը սիրտ առած այս բանից մեծ ոգեսրութեամբ աջից ու ձակատից յարձակւում է թիւրքաց ոյժերի վրայ, որոնք այսպիսով ընկնում են երկու կրակի մէջ՝ յետերից Լազարեի, իսկ առաջից գեներալ Հէյմանի գրոհի միջև։

Խուում են մերթ այստեղ մերթ այնտեղ ուսւս գընդերի անընդհատ ուսաները։ Թիւրք զօրագնքերը գողում են և, մի քանի ապարդիւն յարձակումներից յետոյ, նահանջի են դիմում այս անդամ արդէն փախուստի նման։ Սոսկակի իրարանցում է ընկնում թիւրք բանակի մէջ մանաւանդ, իրը տեսնում են, որ ամենից առաջ իր թիկնապահներով կուի գաշտը թողեց զօրքերի գլխաւոր հրամանատար Մուխթար փաշան իր շտաբով։ Այս նկատելուն պէս թիւրք թնդանօթածիգները թողնում են թնդանօթները, փամփուշտի և ոռոմքերի արկդները, զինւորական ահագին պաշարը և շտապում են ժամ առաջ թողնել Ալաջյի ամրութիւնները՝ ուղղւելով դէպի Վիզին-Քեվ-այդտեղից Ղարս մտնելու նպատակով։ Սակայն նրանց ետեից ընկած ուսւս զօրքերը կտրում են փախուստի այս միակ ձանապարհը և, շրջապատելով լքւած, զլուխները կորցրած բանակին, մութն ընկնելու ժամանակ ստիպում են նրան անձնատուր լինել։

Այս նշանաւոր կուում թիւրքերը կորցնում են մի քանի հազար սպանւածներ և վիրաւորներ. բացի դա անձնատուր են լինում՝ եօթ փաշաներ, 214 օֆիցիեներ մօտ 7000 զինւորներ, իսկ 35 գաշտային թնդանօթներ ու անհուն քանակով պատերազմական ու ուտեստի պաշտ մնում է ուսւսաց ձեռքը։

Յաղթութիւնը կատարեալ էր ու փառաւոր։

Այսպէս վերջացաւ հոկտեմբեր 3-ի Ալաջյի պատմական ճակատամարտը, որի ընթացքում գեներալ Լազա-

րեկի թշնամու թիկունքի վրայ գործած դժւարին ու վըճուական շարժումը որոշեց ճակատամարտի բաղզը։ Դրա համար պատերազմի հերոս գեներալ-լէյտենանտ Լազարե արժանացաւ Գէրոգիի Յ-րդ աստիճանի խաչին՝ մտնելով ուսւսաց նշանաւոր ուղմագէաների շարքը։

Բացի ուսւսական մամուլից, եւրոպական թերթերը՝ իրանց պատերազմական թղթակիցների բերանով, մեծ հիացմունքով զբեցին Լազարեի կատարած այս շարժման մասին, իսկ մուսաստանից Լազարե ստանում էր շնորհաւորութիւն շնորհաւորութեան ետեից։

Այնուհետև Լազարեի անունը մեր բանակում փայլեց մի նոր փայլով և նրա հեղինակութիւնը բարձրացաւ բոլոր օֆիցիերութեան աչքում։ Այս գործի համար նա ըստացաւ իր ընկերներից «Ալաջյի հերոս» տիտղոսը, որը դրանից յետոյ տեղի տևեց արդէն «Ղարսի հերոս» ամենապատւաւոր տիտղոսին։

13. ԱՍԶԱՐԵԻԻ ԾՐԱԳԻՐԸ ՂԱՐՍՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ալաջյի մօտ կրած ծանր և ամօթալի պարտութիւնից յետոյ, Մուխթար փաշան շտապեց ժամ առաջ թողնից կերպում կարել Ալաջյի մասին, որը մօտ 20 հազար հոգով պէտք է շտապէր, Հէյման, որը մօտ 20 հազար հոգով պէտք է շտապէր, Հէյմանի գեռ Մուխթարը չէր մտել երգրում կարել նրա ճանապարհը և ստիպել կուի։

Հէյմանի գնալուց յետոյ մնացած զօրքը մօտ 35000 համար կատարեալ է անձնաւութեանը, յանձնւեց գեներալ-լէյտենանի գործի մասին, որը մօտ 20 հազար հոգով պէտք է շտապէր, Հէյմանի գեռ Մուխթարը չէր մտել երգրում կարել նրա ճանապարհը և ստիպել կուի։

Այժմ մասին գնալուց յետոյ մնացած զօրքը մօտ 35000 համար կատարեալ է անձնաւութեանը, յանձնւեց գեներալ-լէյտենանի գործի մասին, որը մօտ 20 հազար հոգով պէտք է շտապէր, Հէյմանի գեռ Մուխթարը չէր մտել երգրում կարել նրա ճանապարհը և ստիպել կուի։

Այժմ մասին գնալուց յետոյ մնացած զօրքը մօտ 35000 համար կատարեալ է անձնաւութեանը, յանձնւեց գեներալ-լէյտենանի գործի մասին, որը մօտ 20 հազար հոգով պէտք է շտապէր, Հէյմանի գեռ Մուխթարը չէր մտել երգրում կարել նրա ճանապարհը և ստիպել կուի։

Ղարսի զօրքը կազմաւէր և հնար կունենար գնալ միանալ Հեյմանի զօրամասի հետ երգրումը վերցնելու, որը այս պատերազմի վախճանական նպատակն էր:

Եւներալ Լազարեին՝ որպէս զօրամասի հրամանատարի և ռազմական զօրապետի, յանձնեց կազմել և ներկայացնել Ղարսն առնելու ծրագիր:

Շուտով նա ներկայացնում է այդ, որից երևում է, որ նա առանձին նշանակութիւն չէ տալիս բերդի ռմբակոծութեանը, և կողմանակից է բերդը գրոհով (շտուրմ) վերցնելուն:

Լազարեի ծրագիրը մանրամասն քննուում է զինւորական խորհրդում. այդաեղ գտնում են, որ ծրագրի մէջ չէ յիշւած այն մասին, թէ ինչպէս պէտք է զօրքը յետ նահանջի, եթէ գրոհը անաջող անցնի. Երբ այդ մասին նկատում են Լազարեին, նա պատասխանում է.

— Երբ ես զօրքը տանում եմ բերդն առնելու, ես չեմ նահանջում մինչեւ նրան վերջնականապէս չվերցնեմ:

Որքան և համոզեցուցիչ էր Լազարեի ներկայացրած ծրագիրը, սակայն ներկայում նա չէ ընդունուում, քանի որ գլխաւոր շտաբում կարծում էին, որ գրոհով վերցնելու շատ զոհեր կպահանջի, ուստի որոշում է—նախ քան գրոհին դիմելը սկսել բերդի մարտկոցների սմբակոծումը, որից յետոյ, վնասելով բերդի զանազան մասեր, կարելի էր դիմել գրոհին:

Եւ ահա համաձայն այս ծրագրի 23 օր շարունակ Ղարսի բերդը չորս կողմից ռմբակոծում է. սակայն, ինչպէս երևաց յետոյ, այդ ռմբակոծութիւնը զգալի վնասներ չեր հասցել բերդին:

Անաջող անցաւ և Ղարսի բերդապահին արւած կըրկնակի առաջարկը՝ բերդը տալու և զօրքի անձնատուր լինելու մասին:

Այդ բոլոր անաջող փորձերից յետոյ միայն որոշեց

դիմել բերդի առնելուն գրոհով, այսինքն այն ծրագրով, որ հէնց սկզբում առաջարկել էր գեներալ Լազարեր:

Եւ այսպէս, այս որոշումից յետոյ բերդն առնելու գործողութիւնը, համաձայն նրա կազմած դիսալօգիցիայի՝ յանձնեց գեներալ Լազարեին: Այդ բանը նրան անչափ ուրախացրեց: Նա, ինչպէս վկայում են ժամանակակիցները, այն բոպէից մարմարացեալ եռանդ էր դարձել. գիշեր ու ցերեկ առանց հանգստի մերժ այս, մերժ այն զօրամասն էր գնում, տեսնողին շնորհաւորում էր բերդի առումը մի այնպիսի հաւատով, որ, կարծես, ճիշտ որ, սմեն ինչ վերջացած էր. և նշանաւորն այն է, որ նրա այդ հաւաաը ոգեսրում, սիրտ էր տալիս ամբողջ զօրքին՝ սկսած կորպուսի հրամանատարից. մինչեւ վերջին զինւորը:

Ղարսի գրոհի օրը որոշած էր նոյեմբերի 2 ին, սակայն, անձրեային եղանակի պատճառով, հետաձգւեց այն նոյեմբերի 5-ի գիշերը:

Աւելորդ չէ այստեղ մի քանի խօսք առել Ղարսի բերդի մասին:

Ղարսի բերդը Ասիայի ամենահին ամրութիւններից մէկն է. չորհիւ իր բնական աննման գիրքի, Ղարսի գետի ապաւաժու բարձրագիր կառուցւածքի և յետոյ նրանց վրայ ահագին տարածութեամբ շնուած և մեծ հմտութեամբ ու ամրութեամբ արհեստական 13 մարտկոցների, որոնց ցից ամեն մէկը իր յատուկ ամրութիւններն ուներ և տասնեակ տարիներ շարունակ պատնէշներով, յենապարիսպներով կրկնակի ամրացւած էր, Ղարսն այդպիսով կազմում էր ոչ թէ մի բերդ, այլ բերդերի մի ամբացքած վրձնն, որով և նա, իրօք, աշխարհիս ամենաանառիկ բերդակների վրայ թոյլ չէին, տալիս մօտենալ բերդին 8—10 վերատից աւելի: Եթէ այս բոլորի վրայ աւելց-

նենք և այն, որ բերդում գտնվում էր մօտ 18000 բերդապահ զօրք և 7000-ի չափ քաղաքացի միլիոններներից, նաև այն, որ թէ բերդը և թէ քաղաքը ունեին ահագին քանակութեամբ ռազմամթերք, ռւտեստ, լաւ կազմակերպւած ինժեներական ռաս, այն ժամանակ ոլարդ կլինի թէ ինչ մեծ դժւարութիւններ էր խոստանում նրա առումը գրոհ տևող զօրքի կողմից:

Եօթ ամիս ոռւս զօրքը՝ կանգնած էր Ղարսի պարխոպ-ների տակ. երկու անգամ շաբաթներ շարունակ ամեն կողմից պաշարւած բերդաքաղաքը ենթարկվել էր ոռւսաց մի քանի հարիւր թնդանօթների ուժեղ ուժքակոծութեանը, սակայն այդ բոլորից յետոյ ել ամրութիւնը կանգնած էր նոյնքան հպարտ ու գոր, որքան նա էր պաշարման հէնց առաջին օրում։ Ճիշտ է, մի քանի անգամ քաղաքի բնակիչները դիմել էին թէ բերդապահին և թէ իրեն Մուխ-թար փաշային, որ նա թողներ բերդը ու, դուրս գալով դաշտ՝ կուփ բռնւէր ոռւսաց զօրքի հետ, սակայն հէնց քաղաքում ապօպները լաւ գիտեին, որ բերդը կարող է դիմանալ շատ ու շատ զբոհների նոյն իսկ երեք անգամ աւելի ոյժերի կողմից, քան այն, ինչ որ այժմ ներկայացնում էր ոռւսաց բանակը։

14. ԱԶԱՐԵԻԻ ԴԵՐԸ ՂԱՐՄԻ ԳՐՈՒՅԻ ԵՒ ԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ղարսի շուրջ կատարւող վճռական գործողութիւնները զեկավարելու և պատմական այդ խոշոր ձեռնարկութեան իրագործմանը ներկայ լինելու համար Թէֆլիսից բանակ էր եկել Կովկասեան գործող բանակի գլխաւոր հրամանատար Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչ, որը, Լօրիս-Մելիքովի հետ միասին, հսկելու էր Ղարսի գրաւման բոլոր գործողութիւններին:

Եւ այսպէս՝ ամբողջ զօրքը բաժանւեց երեք գլխաւոր զօրասիւների. զըսի տևող զլխաւոր մասերը գտնւում էին գեներալ Լազարեի անմիջական հրամանատարութեան տակ. սրանք իրանց նովատակ էին դըել առնել Ղարսի ամենամուր՝ հարաւարենելեան մարտկոցները. Ղարսի չայի ձախ ափի ամրութիւնների դէմ ցոյց էր անելու գեներալ Ռօօպի զօրասիւնը, իսկ Ղարադաղի դէմ գործելու էր գեներալ Շատիլովի զօրամասը:

Նը գոսսրալ օտարեւու է և նոյն ժիշտ ժամը 8-ին, համաձայն դիսպօղիցիայի, ամբողջ զօրքը, ունենալով իրանց առջե կամաւորների շղթաներին՝ իրենց առաջնորդներով, խիստ շարքերով առաջ անցաւ գերեզմանական լուսութեան մէջ։ Լազարե, դառնալով զօրքին, ասաց. «Տղէրք, իմացէք, որ նահանջ չկայ. գնում ենք կամ վերցնելու, կամ մեռու»։ Եւ զօրքը, լաւ ճանաչելով իր առաջնորդին, գինելու։ Եւ զօրքը, լաւ ճանաչելով իր առաջնորդին, գինելու։

Այս բանը մի առանձին, զուտ ուղղակի է:

թիւն առաջ բերեց բանակի բոլոր սպառչները և
—Այժմ, Աստծու օգնութեամբ դէպի առաջ, — ասաց
Լազարի և, հանելով զիլսարկը, երեսը խաշակնքեց. Նրա
օրինակին հետեւեցին բոլորը:

«Պարզկայ, լուսնեակ զիշեր էր,—աղախարք մեռ աներալ Պօրտօն—հեռառում երևում էին մարտկոցների գոռ ստւէրները: Սառնամանիքը, գնալով, սաստկանում էր: Խոր լուռթիւնը, որ ընդհատում էր հեռառում պայցթող թնդա-նօթների գարկերի մէջ, թագաւորում էր չորս կողմբ: Բոլորը ամենալարւած սպասողութեամբ լուռ էին: Յան-կարծ թշնամու կողմից արձակած թնդանօթի ոռումքից առաջացած կայծը լուսաւորեց զիշերւայ մթութիւնը, և առաջացած կայծը լուսաւորեց զիշերւայ մթութիւնը, և բարձր Շօրօնի կատարները հրավառուեցին կրակի լեզուներով: Դա զեներալ Ռօօսին էր, որ, սկսելով իր ցոյցը, մեծ եռանդով առաջ էր տանում այն, զրաւելով այդ

կողմի վրայ թշնամու ոյժերի մեծ մասը։ Նոյն խոկ Ղարսի բերդապահ Հուսէյն փաշան շտապեց Հաֆեսից այն կողմն անցնել, համնգւած լինելով, որ գրոհը ուղղված է Շօրօնի վրա։

Մինչ այդ գրոհի դուքս եկած զօրամասերը լոելեայն առաջ էին գնում դաշտավայրով, ոչ մի բանով չընդհատելով դիշերային լոռովիւնու:

Ուղղութիւնը վերցրած էր ճիշտ, և զօրքը արդեն մօտենում էր մարտկոցներին, երբ յանկարծ թիւրքական բոլոր բատարէաները միանգամից իրանց կատաղի կրակը ուղղեցին մօտեցող զօրքերի վրայ։ Զօրասիւները առաջ ընկան և... կորան թշնամու մարտկոցները ծածկող ծփի մէջ։ Գրոհը սկսւած էր։

Լազարեն իր թիկնախմբով և երկու հարիւրեակ պահակի հետ առաջ անցաւ և կանգնեց Ղանլի ու Հաֆիս մարտկոցների միջև գտնւած տարածութեան վրայ։ Ծխի և մթութեան մէջ հնար չէր լինում հետեւ այն գործողութիւններին, որ կատարւում էին ամրոցների առաջ։ Միայն թշնամու թնդանօթներից ու հրացաններից արձակած կրակն էր, որ իմաց էր տալիս թէ ուր ինչ է կատարւում։

Յանկարծ մութ երկնակամարի վրայ, պայծառ ասա-
ղի նման, վասւեց պայմանաւոր Փըշշանքը. յետոյ երկրոր-
դը, երբորդը և միւմները. Լազարեի թիկնապահների մէջ
անցաւ ուրախ փափառց... Ֆըշշանքը նշան էր, որ Սուվա-
րին վերցւած է: Բայց դա գրոնի միայն սկիզբն էր: Ղան-
լին ու Հաֆիսը յամառ կերպով գիմադրում էին:
«Ուռա»-ի ձայներն ընդհատւել էին և գրա տեղ այդ կող-
մից լուռում էր հրացանների ճարճատիւնը, որը հասնում
էր իր ամենալարման աստիճանին: Պարզ էր, որ զօրքը
հանդիպել էր լուրջ ընդդիմադրութեան և չեր կարողա-
նում կոտրել թշնամու յամառութիւնը:

Զնայած, որ կէս գիշերի ժամը մէկն էր, սակայն անկարելի էր նախատեսնել կուի վախճանը: Լազարել վաղուց այս ու այն կողմն էր ուղարկել իր թիկնապահ—համբաւարերներին, սակայն ստացւած տեղեկութիւնները մէկը միւսից անմիտիթաք էին:

Սուվարիի ամբութիւնը, ճիշտ է, վերցրել էր Մելիքով կատաղի սւխնամարտով և ապա առաջ էր անցել գեղագույն ամբութիւնը, սակայն այստեղ չգտնելով գենեպի Զիմ ամբութիւնը, սակայն այստեղ չգտնելով, սակայն իսկամաբուվին իր զօրքերի հետ, Մելիքով, ստիպւած, ըստ կոմարովին իր զօրքերի հետ, Մելիքով, ստիպւած, ըստ կոմարովին իր զօրքերի հետ, Մելիքով, ստիպւած,

Միւս զօրամասը ևս կոմարովի առաջնորդութեամբ
ուշանալով հասնելու Զիմին, ստիպւած յարձարել էր
Թախմախ-Թափիելի վրայ, սակայն փոքրաթիւ լինելով, չեր
կարողացել թուրքերի յամառ ընդդիմագրութիւնը կոտրել
և նսմաէս նահանջել էր:

Զախիս թիվ յարձակման անաջողութիւնը պարզ էր:
Սակայն դրանից աւելի փայլուն չէին գեներալ Գրաբբէի
հրամանատարութեան տակ գործող աջ զօրամասի գործե-
րը։ Սա ևս, հանդիպելով թշնամու ուժեղ կրակին, մացել
էր իր դիրքերում կանգնած, կորցնելով այս կուի մէջ իր
քաջ հրամանատարին՝ գեներալ Գրաբբէին։ Ամեն կողմից
օգնական զօրք էին պահանջում Լազարից։

Սակայն այս անաջողութիւնները մի վայրկեան առ-
գամ չեն շփոթում Լազարեին։ Նա որոշում է պահել պա-
համար միմիայն վերջին ըոսկէի համար, ուստի
հետի զօրքը միմիայն վերջին ըոսկէի համար, ուստի
հրաման է տալիս իրեն դիմողներին—առաջ անցնել՝ առանց
օդնական զօրք սպասելու, և ինքը դրանից յետոյ գնում
է Ղանլիի ամրութեան կողմը։ Ահա այստեղ նա ընկնում է
հրացանաձգութեան կրակի մէջ։ Գնդակները կարկուտի
նման թափում էին նրա չորս կողմը, մի ըոսկէում նրա
շուրջը գտնւած թիկնապահները իրենց ձիերով գետին են

ընկնում՝ սպանւած և վիրաւոր։ Այդ պահին մի իրարանցում է ընկնում նրա ետեռում։ Շատերն իսկոյն վայր են իջնում իրանց ձիերից։ Լազարե միայն հարցնում է—ով է վիրաւորւած։

Պորուչիկ Լազարե, Զերդ Գերաղանցութիւն—պատասխանում է մի գողդոջուն ձայն։

Տարեք դուրս—ասում է գեներալը։ Եւ նրա երեսի վրայ այդ պահին և ոչ մի մկան չի շարժւում։ մահամերձ պորուչիկը նրա սիրելին էր, եղօր որդին, մի ջահել արտիլերիստ, որի ընդունակութիւններով պարծենում էր ինքը Լազարե։

Մինչ այդ, Ղանլիի ճանապարհին Լազարեին հասնում է կորպուսի հրամանատար Լօրիս-Մելիքովի կողմից ուղարկւած թիկնապահը։ Լօրիսը յայտնում է, որ, ի նկատի ունենալով Զիմի և Սուվարիի վրայ կատարած յարձակման անաջողութիւնը և Ղանլիի ու Հաֆիսի յամառ ընդդիմադրութիւնը, նա թոյլատրում է Լազարեին տալ զօրքին նահանջի հրաման։

— Յայտնեցէք կորպուսի հրամանատարին, պատասխանում է նրան Լազարե, որ ես գրոհը վարում եմ անդարձ։ Եթէ Ղարսը չըվերցը այս գիշեր, կվերցնեմ ցերեկը և կամ կըկուեմ մինչև յաջորդ գիշեր։

Դեռ նոր էր հեռացել թիկնապահը Լազարեից ստացած այս պատասխանով, որ մեկ էլ մութ երկինքը լուսաւորում է հրթիւնների պայծառ խուրձով։ Հաֆիսն առնաւծ էր։ Նոյն րոպէին գեներալ Ալիազով իմաց է տալիս Լազարեին, որ Հաֆիսն առել է և ոչ մի դէպքում նրան յետ չի տայ։

Սա ծանր գիշերւայ ընթացքում ստացած առաջին ուրախաբեր լուրն էր։

Այժմ միայն Լազարեւ որոշում է օգնական զօրք ու-



Գործող բանակի կորպուսի հրամանատար Գեներալ-ադյուտան
Կոմս Մ. Տ. Լօրիս-Մելիքեան։

զարկել Ղանլիի զօրամասին և այն էլ ոչ թէ զԱխաւոր պահեստի զօրքից, այլ Ալխազովի զօրասիւնից:

Հէնց այդ պահին Լազարեն տեղեկացնում են, որ Ղարադաղը նոյնալիս առնւած է: Այս լուրը և անսալասելի էր և չափից դուրս կարեոր, որովհետև Ղարսի բոլոր ամբութիւններից Ղարադաղը ամենից անառիկն ու հզօրն էր: Այժմ պարզ էր, որ Ղարադաղի վերջնելով Ղարսի բաղդը որոշուած ալէտք էր համարել:

Լազարե շտապում է անձամբ տեսնելու ու ղեկավարելու արդէն առնւած ամրութիւնների շուրջը կատարւող գործողութիւնները: Նա գալիս է Հաֆիս ու Խրախուսում է քաջ զօրքին, առա դնում է դէպի Ղարադաղ և տեսնելով թէ որպիսի անձնազութեամբ համեմատարար փոքրաթիւ զօրքը կուռում է թիւրքաց դէմ, այդ զօրասիւնին օդնական ոյժեր է ուղարկում ապահովելու Ղարադաղի մեր ձեռքում մնալը: Դրանից յետոյ նա ուղևորւում է դէպի քաղաք և միջնարերդ, ուր բոլոր զօրամասերից զանազան խմբեր ժողովւել էին և վարում էին խմբական կորիւ: Սրանք նկատում են Լազարեն թէ չէ՝ ողը թնդացնում են անընդհատ «ուռա»-ներով:

Շնորհաւորելով զօրքին սրա տարած փառաւոր յաղթ թութեամբ, Լազարե կարգադրում է, որ զօրքը իսկոյն զբաւի բոլոր կամուրջները, որպէսզի թշնամու փախուստի ճամբան կտրւի: Դրանից յետոյ նա իր թիկնապահներով գնում է դէպի Ղանլի: Այստեղ կորիւ դեռ շարունակւում կամ է կերպով: Թիւրք զօրքը մտած բերդի էր ամենայամառ կերպով: Թիւրք զօրքը մտած բերդի ներսը ոչ մի կերպ չէր համաձայնուում անձնատուր լինենք: Միայն Լազարեի գալով և նրա սպառնալիքի տակ, որ լու: Միայն Լազարեի գալով և նրա սպառնալիքի տակ, որ կոմբակոծի այդ ամրութիւնը, պաշտպանողները անձնատուր լինելու նշան են տալիս և բացում դարպանները: Այսպէս, վերջապէս, ընկնում է և կատաղի Ղանլին— թիւրքաց ընդդիմագրութեան վերջին ապաստարանը:

Հանվիի անկումով Հարսի գրոհի բոլոր գործողութիւնները և բերդի առումը աւարտւած կարելի էր համարել: Լազարե շատապում է Լօրիս-Մելիքովի մօտ հաշւետւութեան: Այստեղ շնորհաւորելով փոխադաբար այս անասելի և մեծ յաղթութեամբ, Լազարե գնում է կարգադրելու, որ բանւեն բոլոր ճանապարհները, որտեղից պարտւած զօրքը կարող էր փախուստի զիմել՝ ուղղւելով էր զբում տանող ուղին: Հեծելազօրքը առաջ է անցնում և վայրկենապէս բանում է բոլոր անցքերը, դէպի ուր արդէն դիմել էին թիւրքական գեներալներն իրանց զօրքով: Հեծելազօրքին օգնութեան է համում հետեւակ զօրքը թնդանօթներով և թիւրքերը, կարւած առաջից և թիւրուքը—անձնատառը են լինում, որով և իրապէս աւարտւում է պատերազմական պատմութեան մէջ այս անօրինակ գրոհի բոլոր գործողութիւնները:

Ուրախութիւնը անչափ էր, յաղթութիւնը ահազին, տւած զոհերը համեմատաբար քիչ, իսկ հասյրած կորուստներն ու յաղթութեան պատւղները մեծ:

Հարսի առումով, որը տեսաց ընդամենը 12 ժամ, ուղարկած ձեռքն են ընկնում 17,000 գերիներ, հինգ փաշա և 800 սպաներ. բայց այդ, որպէս պատերազմական աւար մնում է 300 թնդանօթ և անհուն քանակութեամբ ռազմամթերք՝ ուռմբեր, հրացաններ, փամփուշտ, փառոդ, տւանիզէն, վիրակապի նիւթեր և այլն: Ռուսաց տւած կորուստներն էին—մի գեներալ (կոմս Գրաբբէ), 76 օֆիցիեր և 2183 զինուր սպանւած ու վիրաւոր:

Սրտանց ու ամենավառ գոյներով զրւատելով իր հրամանատարութեան տակ գանւած բոլոր զօրականների և զօրամասերի այս գիշեր ցոյց տւած քաջութիւնները, Լազարե չի գտնում այնքան պերճ խօսքեր, որով կարողանայ շնորհակալ լինել զօրքին որա ցոյց տւած անօրինա քաջութեան համար. իր դիմումի մէջ նա խնդրում է

Լօրիսից միջամտել գլխաւոր հրամանատարի մօտ՝ Գէորգիի բարձր շքանշաններով պարզեատրելու բոլոր այն անձանց, որոնց ցուցակը ինքը ներկայացնելու է:

Պարզ է, որ օրւայ գլխաւոր հերոսը՝ Հարսի գրոհի և առման հեղինակը գեներալ Լազարեն էր:

Այս անօրինակ գրոհի և նրա կատարման ժամանակ ցոյց տւած արտակարգ քաջութեան համար նա պարզեատրւում է Գէորգիի մեծ խմչի երկրորդ աստիճանով, ոք այն ժամանակ ուղարկած բանակում ունէին միայն չորս հոգի, իսկ գործող կորպուսում երկուաը՝ Լօրիսը (Արդահանը առնելու համար) և գեներալ Հէյման (Դէվէ-Բոյունը առնելու համար):

Բացի այդ, որպէսզի կովկասեան բանակի և Հարսի պատմութեան մէջ պահպանւի Հարսի բերդի առման յիշատակը, Ղանլի ամրութիւնը, որ պաշտպանում էր բուրից տւելի յամառ և ոքը մեր այդ գիշերւայ բոլոր կարուստների կէսը տարաւ, հրամայւեց ի պատիւ Լազարեի այնուետեև անւանել «Լազարեի մարտկոց»:

Այդ պատմական օրից գեներալ-լէյտենանտ Լազարեի ժողովրդականութիւնը հասնում է իր գագաթնակէտինտ թէ կովկասից և թէ Ռուսաստանից և նոյն իսկ արտասահմանից նա ստանում է շնորհաւորութեան բազմաթիւ հեռագիրներ և այդ օրւանից նա յայտնի է դառնում ուղարկածութեան մէջ Հարսի հերոս անունով:

Հարսի առման մասին Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչ աւետում է Թագաւոր Կայսրին հետեւալ հեռագրով.

«Այսօր գրոհով վերցւեց Հարսը: Կոիւր տեսաց երեկոյեան ժամը 8-ից մինչև առաւատեան ժամը 8-ը: Մեր ռազմական աւարը որպէս և կորուստները գեռ ևս հաշւած չեն: Պատիւ ունեմ շնորհաւորել Զերդ Կայսերական Մեծութեանը»:

Ղարսի առումը տօնւեց ամեն տեղ համայն Ռուսական տանում ամենամեծ հանդիսաւորութեամբ ու անսպառ ուրախութեամբ։ Բոլորը գիտեին, որ Ղարսի առումով սուս զրօշակը պարտական է սուսաց քաջարի զօրքի անհուն անձնւիրութեանը և ապա Հօրիս-Մելիքովի և Լազարմի նման հեռատես ու քաջ զօրապետների ղեկավարութեանը։ Քաջ զօրքը արժանի էր նոյնքան քաջ զօրապետներին, իսկ զօրապետները առում էին քաջագործութիւններ, ունենալով ոուս զօրքի նման անվեհեր զինուորներ։

Դա կովկասեան բանակն էր, եփւած կոիւների մէջ անվախ ու համարձակ, համբերատար ու անպահանջ։

15. ԱՍՉԱՐԵՒԾ ՈՐՊԵՍ ԵՐԵՒԱՆԻ ՕՏՐԵԱԴԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Ասաոիկ և զոռ Ղարսն ընկած էր և ճանապարհները բացւած, այժմ մնում էր այդ քաղաքում և նրա շրջանում մտցնել ոուսական օրէնքներ, նոր կարգ ու կանոն և ընդհանրապէս հոգ տանել, որ երկրում թաղաւորի վարչական նոր ձեւը՝ փոխանակ թիւրքական անխնամ ու անհոգ կառավարութեան։ Եւ ահա քաղաքը մի ամսւայ մէջ նորից կենդանութիւն է ստանում. վերադառնում է փախոծ ազգաբնակութիւնը, գալիս հաստատում են վաճառականները, սկսում է կանոնաւոր առևտուրը. քաղաքի ներքին բարեկարգութիւնը, նոր նշանակւած նահանգապէտ գեներալ Պօպկօյի ղեկավարութեան տակ, օր աւուր զարգանում է։

Միաժամանակ ազատւում են նաև զործող բանակի այն ոյժերը, որոնք պաշարել էին Ղարսը. Այժմ դրա մեծ մասը ուղարկում է էրզրումի կողմը, որը այժմ պաշարւած էր սուսաց զօրքի կոկմից՝ Դէվէ-Բոյնուն առնելուց յետոյ. մնացեալ զօրքը տեղաւորւում է ձմեռային բնա-

կարաններում, սպասելով գարնանը, երբ, ինչպէս հաւատացած էին, վերսկսելու էին պատերազմական զործողութիւնները նոր ոյժով. այս անդամ արդէն դէպի Վան, Մուշ և ընդհանրապէս դէպի թիւրքաց Հայաստանի խորքերը։

Այդ պահին, այն է 1878 թւականի յունտարին գեներալ-լէյտենանտ Լազարել նշանակւում է Երևանեան օտրեաղի հրամանատար զեներալ Արշակ Տէր-Ղուկասեանի տեղ, որը հիւանդութեան պատճառով ժամանակաւոր արձակուրդ էր վերցրել։

Երևանեան օտրեաղը այդ ժամանակ բաղկացած էր 14000 զօրքից և ցրւած էր՝ մասամբ իդղիրում, մի մասը էջմիածնում, Խալֆալիում, իսկ զիստուր մասը գտնուում էր տաճկան Բայազէտում և Ալաշկերտի հովտում — տիրելով այդ ամբողջ շրջանը, ուր ձմեռելու էր զօրքը։

Ամենից անհանդիսա տարբը այդ շրջանում կազմում էին քրգերը, որոնք շարունակում էին ոչ միայն թիւրք զօրքին օգնել, այլ, որ զիստորն է, թալանում ու կոտորում էին թէ այդ և թէ Վանի ու Մուշի վիլայէթների հայ ազգաբնակութեանը։

Լազարել, որպէս լու հայ, չէր կարող սահնասրութեամբ լուել ու տեսնել քիւրգերի հայոց վերաբերմամբ արածները, մանաւանդ, որ ամեն կողմից թալանւած ազգաբնակութիւնը գալիս ումում էր, խնդրելով նրա հզօր պաշտպանութիւնը։

Թիւրքական ասպատակութիւններին վերջ տալու նըւպատակով Լազարե իդղիրից թիւրքերէն լեզով մի կոչ է պրում և ուղարկում քրդական բոլոր ցեղապետներին. կոչ մէջ նրաբազրելով սուսական զօրքի տարած յաղթութիւնները Թիւրքիայի թէ եւրոպական և թէ ասիական մասերում, նա հրաւիրում է քրդերին ուղարկել իրենց ներկայացուցիչներին Ալաշկերտ, որոնց հետ ինքը խօսելու մասնց բոնելիք դիրքի մասին. «Իսկ եթէ, զրում է նա, է նրանց բոնելիք դիրքի մասին».

ձեր ցեղապետներից ոմանք չեն գայ ինձ մօտ, այն ժամանակ ես ինքս կդնամ նրանց մօտ. այդ դէպքում իմ գործողութեանց ամբողջ պատասխանատութիւնը զցում եմ անհնազնդների վրայ. զրանց զղջումը կլինի արդէն չափազանց ուշացած»:

Լազարեի այս կոչը թէ իր տոնով և թէ բովանդաւ կութեամբ մեծ տպաւորութիւն է զործում քիւրդ ցեղապետների վրայ, որոնցից ոմանք ճանաչում էին նրան պատերազմներում կամ թէ լոել էին նրա մասին Դաղստանից եկած լեռնակամներից:

Եւ ահա քիւրդ աշխրէթներից ոմանք գաղանի կերպով ժողովւելով և քննելով եղած գրութիւնը, որոշում են՝ մեծ նւէրներով մի պատգամաւորութիւն ուղարկել Հազարեի մօտ, յայտնելով իրանց հալանակութիւնը ուուներին, խոստանալով իրանց ոյժերով օդնել ուուս զօրքին և հեռու մնալ քրիստոնեանների, մասնաւորապէս հայերի վերաբերմամբ քոնութիւններ կատարելուց: Սակայն մինչեայդ բանն իրագործելը ուուս և տաճիկ կառավարութիւնների միջն կայանում է ժամանակաւոր զինադադարի համաձայնութիւն. համաձայն զրա ուուները մանելու էին երզում, իսկ երկու կողմի զօրքերը պէտք է մնային իրանց զրաւած տեղերում՝ առանց պատերազմական գործողութիւնները շարունակելու, մինչև որ ձմեռն անցնէր և գար գարունը, երբ հաւանական էր համարւում, որ, եթէ երկու կողմերի միջն հաշտութիւն չկայանար, նորից գերսկւելու էր պատերազմը:

Ահա այդ ժամանակ կորպուսի հրամանատար զեներալ-ագիւտանտ Լօրիս-Մելիքով, որ ընդհանրապէս թոյլ առողջութեան տէր էր և պատերազմի այս տաս ամիսներում քաշել էր ամենաչարքաշ կեանք, բժիշկների եռանդուն ստիպման տակ առըրիլ 12-ին ժամանակաւոր արձակուրդ է ստանում վերանորոգելու համար իր առողջու-

թիւնը: Ի վարձատրութիւն իր արած ահազին ծառայութիւնների մասերազմի ընթացքում և ձեռք քերած մեծ աջողութիւններին նա արժանանաւմ է կոմսի աստիճանին: Լօրիսի տեղ կորպուսի ժամանակաւոր հրամանատար նշանակւում գեներալ Հէյման, սակայն սա, պաշտօն ստանալու երկրորդ օրը տիֆով հիւանդանալով, մեռնում է և յաջորդ օրը նրա տեղ գործող զօրաբանակի կորպուսի հրամանատար է նշանակւում գեներալ Լազարե:

Լազարե շտապում է վերադառնալ Հարս ստանձնելու իր նոր և պատասխանատու պաշտօնը:

16. ԿՈՐՓՈՒՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԼԱԶԱՐԵԻ ԷՐՋՐՈՒՄՈՒՄ

Գալով Հարս, Լազարե այստեղ իմանում է, որ երդ զրումում և նրա բարձրունքներում ձմեռող ուուս զօրք բանակի զրութիւնը վերին աստիճան ողբալի է. տիֆով հիւտնդների թիւը համում է 7—8 հազարի, չհաշւած այն հազարաւոր զոհերը, որ այդ սոսկալի համաձարակը հնձել էր այս 3—4 ամսում: Կենդանի մնացած զօրքը կորցնելով կիսից աւելին, չուներ ոչ հագուստ, ոչ տաք ընակարան և ոչ էլ բժշկական օգնութիւն ամենահամեստ չափերով, այն ինչ թիւրքերի մէջ օր օրի վրայ պատեշական արամագրութիւնը բարձրանում էր, թշնամարազմական արամագրութիւնը զէպի ուուս զօրքը աճում, իսկ երկան վերաբերմունքը դէպի ուուս զօրքը աճում, իսկ երկում օր աւուր սպասում էր հայերի կոտորած:

Հաստատելով Դարսում և կարգի բերելով զօրքի ուտեսատի, պաշարողական և բժշկական մասերը, նա անհամար է համարում գնալ երզում անձամբ վերահսկելու զօրքի զրութիւնը և իր ներկայութեամբ սանձահարելու միւսուլման ազգաբնակութեան ֆանատիկոսութիւնը, միաժամանակ, նա գիտէր, որ իր դնալով կրածրացնէր այդ քաղաքի և շրջանի հայ ազգագնակութեան կորովը:

Հազարեի Երզրում գալը այսպէս է նկարագրում մի ականատես.

«Մայիս 29-ին երգումում լուր տարածւեց, որ Լազարիս դալիս է և գիշերեկու է Հասան-Նալայում՝ քաղաքից 20 վերստ հեռավում։ Ամբողջ երգումը աննկարագրելի իրարանցման մէջ ընկալու։ Ուր և գնայիր, ում և հանդիպէիր, ամեն տեղ խօսում էին Լազարեի մասին։ Զօրքը հրճւանքի մէջ էր, այն ինչ երգումի թիւրքերը լուրջ մտահոգութեան մէջ էին, որովհետեւ Լազարեի գալատեան մէջ նրանք տեսնում էին մի բան, որ երգումը ընդիշտ մնայու է ոռւսաց ձեռքում։ Եւ ահա նրանք ժողովում են իրար մօտ և չարամտաբար նայում խմբերով ու ուրախ դէմքով քաղաքում անց ու դարձ անող հայերին։ Ընդամենը մի քանի օր առաջ մենք ոպասում էինք, որ քաղաքում կարող է ապստամբութիւնն ծագել, բայց միայն այն լուրը, թէ գալիս է Լազարել, ցրեց թիւրքերի բոլոր երազանքները։ Լազարեին երգումում գեռ ոչ ոք չէր տեսել, բայց նրա բնաւորութեան մասին եղած ու տարածւած լուրերը նրանից շուշ էին հասել տեղու, թէ հայերը և թէ թիւրքերը, որ սովորել էին նրա նախորդի քնքոյց քաղաքավարութեանը և մեզմ վերաբերմունքին, այժմ գողում էին կարգութիւնները տեսնելով։

Մայիսի 30-ի առաւօտից քաղաքի բոլոր խանութները փակւած էին, և ամբողջ ժողովուրդը, զարդարւած, հագած տօնական հագուստներ՝ խմբերով շտապում էր երգուում՝ Ղարսի դարսղաներից դուրս, որտեղից քաղաք էր մտնելու Լազարելու Ժամը 11-ին պատւաւոր պահակը ծածանւող դրօշակով և երաժշտական խմբով եկաւ նիւվագատարանական հրապարակ և կանգնեց տեղացի հարուստ Գասպար-աղա Նազարեանի տան առաջ, ուր և Լազարեի համար բնակարան էր պատրաստւած։ Քաղաքա-

յին բոլոր իշխանութիւնները, ունենալով իրենց գլուխ զինւորական նահանգապետ գեներալ Դուխովսկօյին, Փը-
րանսիական և պարսից հիւպատուսները, հայ և յոյն էֆեն-
դիները սպասում էին նրան քաղաքային դարպասների
մօտ, իսկ զօրքերի հրամանատար իշխան Ճաւճաւածէն
նրան ընդառաջել էր Դէվէ-Բօյունի զիրքերի գարևանդի
մօտ: Լազարի գալիս էր ձիով անընդհատ «ուռա»-ների
որոտների տակ և հանելով փափախը սիրալիր ողջունում
էր ժողովրդին: Յանկարծ նա պահ մի կանգնեցրեց իր
նժոյգը, երբ նրա ականջին հաստ մանկական խմբի ա-
լարժականութեան երգը: Դա հայ դպրոցների
աշակերտունիներն էին, որոնք, մի բարձր բլուրի վրայ
տեղ բանած, երգում էին լազարեին ձօնւած երգը՝

«ԿԵՐՊԵ Քայ զօրապետը,

«Եկցիք մեր Հազարեր

«Հայոց ազգի գեղս ու զարդը»:

Լաղաբեր, պարզ էր, որ խորը զգացւած էր այդ ցոյցից. մօտեցաւ երեխաներին, շնորհակալութիւն յայտնեց նրանց ասելով, որ կայցելի նրանց դպրոցները, որ անձամբ համոզվի թէ ինչպէս են սովորում: «Քիսութիւնը լոյս է, ասաց նա դրանց, իսկ դուք մեր ժողովրդի լուսատու ճրագներն էք»...

Քաղաքացին դարպասների մօտ նա լսեց քաղաքացին խօքնավարութեան ողջոյնի ճառը, բայց այստեղ նրա լոնքերը կլստեցին և աչքերը շահթեր արձակեցին:

«Ուրախ եմ, որ մտնում եմ ձեր քաղաքը խաղաղ ու հանգիստ», ասաց նա նրանց. այս չոր և ապա կարճ պատասխանը միանգամից բացատրեց նրանց, որ իրեն յայտնի է այն ամենը, ինչ որ նրանք կարծում էին թէ ծածկւած է խորին գաղտնիքով։ Այս խօսքերով Լազարի մտաւ քաղաք, ամբողջ ճանապարհը, որով անցնելու էր նա և մադաք.

նաւանդ հրապարակը, ուր իջնելու էր, բերնէ բերան լցւած էր տասնեակ հազարաւոր ժողովրդով. այստեղ էին զինւորականները, սպաները իրանց տօնական համազգեստներով. տան կառւրները, պատշտամբները բռնել էին կանաքը, որոնք ճոճում էին թաշկինակները և խաչակնքում էին նրա գնացքը:

«Վերջապէս մենք լսեցինք, զրում է երզրումի նահանգապետի կինը^{*)}», աղմուկ և «ուռա»-ների ձայնը. տեսնում ենք, առջեից վաղում են բազմաթիւ կարմիք ֆէսեր, նրանց ետից զազախների երկու հարիւրեակ իրանց մեծ զրօշակներով և ապա դալիս է լազարել՝ ողջունելով աջ ու ձախ, մի կողմից իմ ամուսինն էր, միւս՝ իշխանն ձաւ ճաւածէն. նրանց ետից զինւորականներ և յետոյ զարձեալ զազախների պահակը. գնացքը վերջանում էր ժողովրդի անհուն բազմութեամբ: Ֆրանսիական կոնսուլտատի վրայ ծածանող զրօշակը ողջունեց, իսկ կորալուսի հրամանատարի տան վրայ ծածանուց ուռասկան զրօշակը հէնց որ հրապարակի վրայ երեաց լազարել: Այս բոլորը այնքան հանդիսաւոր էր և աշքի զարնող, որ տեղացիները իրանց կեանքում սրտ նման հանդէս չէին լիշում»:

Յաջորդ օրը, յունիս 30-ին, լազարել նահանգապետի տան զահլիճներում նշանակել էր քաղաքացիական վարչութեանց, քաղաքային ինքնավարութեան, քրիստոնեայ և միւսուլման հոգեորականութեան, պատւաւոր քաղաքացիների և անւանի թիւրքերի ընդունելութիւն: Դուրս եկաւ նա, մօտեցաւ ամեն մէկին, հարց ու փորձ արեց, շնորհակալ եղաւ նրանց ծառայութեան համար. յետոյ դարձաւ թիւրքերին մի խիստ ու կտրուկ ճառով.

«Ես լսել եմ, ասաց նա, որ միւսուլմանները դժգոհ են ուռաների կրզրում մտնելու համար. Դուք պէտք է

իմանաք, որ ոչ մի բան առանց Ալահի կամքի չի կատարւում: Իսկ թէ դուք դժգոհ էք, ձեր բարկութիւնը ուղղէք ձեր նախորդ թիւրքական կառավարութեան դէմ, որ չկարողացաւ պաշտպանել ձեզ: Մեր սահմանը, ողործածութեամբն Աստուծոյ, մեր սուրբն է: Դժւար, անկարելի է կանգնել նրա դէմ: Ես ցանկանում եմ, որ միւսուլմանները խաղաղութեան և համաձայնութեան մէջ ապրեն քրիստոնեաների հետ, այդ դէպքում մեր թագաւորի ողորմածութիւնը հաւասարապէս կտարածւի բոլորի վրայ: Ես չեմ հանդուրժի, որ քրիստոնեաները, որոնց պատկանում եմ ես իսրայ, տանեն առաջւայ խիստ վերաբերմունքը: Լաւ կլինէք դուք, լաւ կլինեմ և ես ձեզ համար գատ կլինէք դուք, ես էլ ձեզ հետ հարիւրապատիկ խիստ կվարւեմ: Խորհուրդ եմ տալիս փախչել իմ բարկութիւնից: Օգտւեցէք մեր բաղդաւոր և խազաղ կառավարութիւնից. պարապեցէք ձեր գործերով, քանի ուռաց հրացանների բերանները կտարապանեն ձեր խաղաղութիւնը: Բայց լաւ իմացէք, որ եթէ իմ ականջին հասնի այս խաղաղութիւնը խանգարող որևէ առիթ առաջացած ձեզանից, այդ դէպքում ես ձեր դէմ զէնք կրանեցնեմ: Զկարծէք, որ այս մաքուր և սուրբ զէնքը մենք կը կեղաստենք դաւաճանի զգւելի ու կեղաստ արիւնով. ոչ. այլ ես քար ու քանդ կանեմ ձեր տներն ու ունեցւածքը. ես չեմ ինսայի ոչ ոքի կանեմ ձեր տներն ու ունեցւածքը. ես կենացի ոչ ոքի կասեմ նը Աստծու առաջ ես կենեմ հանդիսաւ խղճով ու կասեմ նը Աստծու առաջ ես կատարեցի իմ պարտքը, քանի որ ես բան—Տէր, ես կատարեցի իմ պարտքը, քանի որ ես նրանց քարոզել էի ասլրել խաղաղ ու անդորր: Լաւ իմանաց միւսուլմաններ, որ ես միշտ էլ իմ խօսքի տէրն եմ ցէք, միւսուլմաններ, որ ես մասին և բոլորն էլ կհաստատեն այդ եղիլ,—հարցրէք իմ մասին և բոլորն էլ կհաստատեն այդ բանը: Դէհ, ցանկանում եմ ձեզ խաղաղութիւն, եթէ ուրանը զում էք, որ մենք մնանք բարեկամներ»:

Պէտք էր ներկայ լինել այդուղի, առում է մի ակա-

^{*)} Տե՛ս «Дневникъ русской женщины»—Духовская.

նատես, հասկանալու համար այն սարսափը, որ պատկերացաւ թիւրքերի երեսին Լազարեի այս ճառի ընթացքում։ և ես հաւատացած եմ, որ եթէ մէկն ու մէկի մէջ չար մտքեր էլ կային, դրանք խսկոյն գոլորշիացան, մինչ այն աստիճան սարսափելի էին ուռու գեներալի անձն ու խօսքը։ Այդ ամբողջ օրը քաղաքում խօսք ու զրոյցի նիւթը Լազարեի այս ճառն էր, որ հազարաւոր մեկնութիւնների գոււն էր բացել։

Լազարե էրզրումում մասց երկու շաբաթ։ այդ ժամանակւայ ընթացքում նրա այցելութիւններն ու շփումները տեղացիների հետ ապացուցեց բոլորին, որ խիստ արտաքինով և դրանից աւելի խիստ արտացայտութիւններով անձի կրծքում ապբում է մի վերին աստիճանի հասարակ, մատչելի և բարի սիրտ և ահա սկզբի սարսափը տեղի է տալիս անկեղծ յարգանքի ու խորը համակրութեան, որոնք ալտայայտում են այն մի շաբք ճաշկերոյթների ու մեծարանքների ժամանակ, որոնցով հիւրասիրում է Լազարեին զօրքը, սրա հրամանատարները, տեղական հայ և թիւրք ազգաբնակութիւնը։

Առանձնապէս Լազարեը սիրում և նոյնիսկ երկրադրում էր ուռու զինւորին ու սրա թափած արիւնը։

Մի անգամ Ղարսի նահանգապետ գեներալ Պօպկօնն Լազարե հարցնում է՝ ուեկ են արդեօք քաղաքացիք իրենց մօտ գտնւած բոլոր զէնքերը։

— Այո, Զերդ գերազանցութիւն, բոլորը ստացայ. բայց զէնքերը ստանալիս ես հրամայեցի ցուցակագրել զէնքերի տէրերի անուն ազգանունները, յայտնելով նըրանց, որ Ղարսը թիւրքերին վերադարձնելու դէպում զէնքերը կտանք իրանց։

— Ինչպէս չէ! կվերադարձնենք Ղարսը, բարկացած պատասխանում է Լազարե, ի՞նչ, զուք, Զերդ գերազանցութիւն իշխան Գորչակնիշ էք, ի՞նչ է։ Վերադարձնել

Ղարսը, որը այնքան թանկագին կեանքեր տարաւ մեզ նից։ Երբէք իմացէք, որ նախքան Ղարսը թիւրքերին յանձնելը՝ ես կիրամայեմ քար ու քանդ անել քաղաքն ու բերդը, քարը բարի վրայ չեմ թողնիլ. այնպէս կանեմ, որ տեղն խսկ չկարողանան գտնել»։ Նոյնը տեղի է ունենում այստեղ՝ էրզրումում։

— Ես Ղարսը չեմ տալ ինչ որ չասեն այնտեղ՝ Բերմինում մեր դիպլոմատները. չափից դուրս արիւն ենք թափել այնտեղ։

Այս խօսքերի մէջ երկում է մի զօրապետի ամբողջ բնաւորութիւն, որը միացած էր ուռու զինւորի թափած արեան հետ, որը նա համարում էր ոսուր և դիպլոմատիական խաղերին չենթարկող։

Յունիս 16-ին նոյն շուքով Լազարե թողնում է էրզրումը և վերադանում Ղարս. ճանապարհին հեռագրով դուռը և աշխատանում է, որ հաշտութիւնը կայացել է համաձայն դրա իմանում է, որ հաշտութիւնը կայացել է համաձայն դրա Ղարս, Արդահան, Բաթում իրանց նահանգներով մնում են մեղ, իսկ էրզրումը հրամայւած էր վերադարձնել թիւրքերին։

16. ԼԱԶԱՐԵԻ ՊԱՏԵՐԱՋՄԻՑ ՅԵՇՈՅ ԵՒ ՄԱՍ ՄԱՀԸ 6 |

Պատերազմն աւարտւած էր, հաշտութիւնը կայացած։ Մուս զօրքին մնում էր թողնել էրզրումը և վերադանալ իր տունը. Որքան և ցաւալի էր էրզրումի թիւրքաց ձեռիր տունը. Որքան և ցաւալի էր էրզրումի թիւրքաց ձեռիր տունը, սակայն այդպէս էր Բերլինի վեհաժողովի քում մնալը, սակայն այդպէս էր միայն Անգլիան, վճիռը, ուր թիւրքին պաշտպան էր ոչ միայն Անգլիան, այլև Գերմանիան ու Աւստրիան։

Սակայն այդ բոլորի մէջ ամենից ցաւալին էրզրումի և նրա շըջանի հայ ազգաբնակութեան վիճակն էր։

Սա, լսելով, որ ուռու զօրքը թուղնելու է էրզրումը,

քաղաքով թողնել անխճեալ երկիրն ու գնալ ոռւս զօրքի
հետ դէպի նոր նւաճած երկիրներ՝ Ղարս, Բաթում, Ան-
դրկովկաս:

Սակայն նոր գաղթականութիւնը չէր մտնում ոռւս կառավարութեան ծրագրի մէջ. նոր նւաճած երկիրը եր, ըստ երևյթին, պահուում էին Թուսաստանի ներքին նահանգներից գաղթող ոռւսների համար, ուստի հրամայեց Լազարեին թոյ չտալ հայերին գաղթել:

Զափաղանց ծանր էր կազարեին այս բանը. նա գիտէր, որ ոռւմների գնալու յաջորդ օքը տեղական թիւրք ազգաբնակութիւնը սկսելու է հայերի կոտորածն ու թալանը: Եւ ահա նա սկսում է այդ աղէտի դէմն առնելու համար մի շարք միջոցների դիմել. նախ հասկացնում է հայերին, որ նրանք չգնան ուղև զօրքի հետ, որ ուսացնոր նւաճած երկրներում նրանք չեն գտնիլ այն, ինչ որ սպառում և երկակայում են. ապա նա մի նամակով զիմում է Երզրումի վալի Խամայիլ վաշային և, գարձնելով սրա ուշադրութիւնը հայ ժողովրդին սպասնող կոտորածների վրայ, լինդրում է պաշտպանել և տպահովել այս աշխատասէր, օգտառէտ ժողովրդին, որը իր քըտինքով լցնում է օսմանեան գանձարանը. իր նամակի մէջ կազարե աւելացնում է. «Խմացէք, Զերդ գերազանցութիւն, որ բաւական է իմ ձեռքիս մի նշանը և 24 ժամւայ մէջ Զեր 5 նահանգները կդատարկւեն հայերից, մի բան, որ հազիւցանկալի լինի օսմանեան կառավարութեան համար»:

Այս նամակը ունենում է իր ազգեցութիւնը. Խամացիւ փաշան գրում է Լաղարևին, որ ինչը տալիս է ազնիւ խօսք, որ ոչ մի հայի գլխից մի մազ անգամ չի բնկնի:

Եւ թիւրքաց զօրքերի հրամանատարը, ի պատիւ իր,
ամենայն աղնւութեամբ կատարում է իր տւած խօսքը.
ուշեմներին, մօլլաներին ուղարկած իր խիստ նամակով
նա ամենածանր պատիմների սպառնալիքով պատիրում

Է հանգստութեան մէջ պահել ժողովրդի վատ ոյժերին և
ձեռք չտալ հայերին. հակառակ գէպքում նրանք պատաս-
խանելու են իրանց դիմով:

Իսմայիլ փաշայի այս խիստ հրամանը ունենում է
իր ազգեցութիւնը. սեպակմբեր 7-ին ոռուս դօքքը թող-
նում է թիւրքաց Հայաստանի մայրաքաղաքը և այնունե-
տե թիւրքերը դէպի հայերը իրանց պահում են շատ
զաւած, նոյնիսկ պատւով:

Եւ այսպէս, ոռւս զօրքը վերադառնում է իր տեղերը. մեծ մասը արձակւում են իրանց տները՝ հանգստանալու տարի ու կիսւայ ռազմական ծանր ու չարքաշ կեանքից:

Հայության մի սրտառուչ կոչով ուղղւած զօրքին, բաժանում է իր ռազմի ընկերներից և նշանակում է կովկասիան երկրորդ կորպուսի հրամանատար, ունենալով իր ոնահատեղին Թիֆլիսում:

Նոյն տարրում նոյեմբեր 6-ին Գետրողբագում սշանակւած էր ռուսաց զօրքում ծառայող Գէորգիևսկիյ առպետների հանդիսաւոր տօնակատարում։ Հրաւիրւած էին այդ հանդիսին ըոլոր աշքի ընկնող զօրապետներն ու ազանները։ Հրաւիրւած էր, ի հարկէ, այդ պատւաւոր Շքանշանի ամենաարժանի հերոս գեներալ Լազարև։


«Հանդէսը նշանակւած էր ջմեռայլս կալուն, պատմում է ականատեսներից մէկը*), —ահազին դահլիճի ամբողջ երկարութեամբ աջ և ձախ կողմում շարւած էին իրանց տօնական համազգեստների մէջ շքանշաններով և, որ դիմաւորն է, Գէորգիի խաչերով, ուզմական այդ բարձր դիմաւորն է, Գէորգիի խաչերով, աջ կողմում Բալկաննեան կուաղաշտի հերոսները —թագաժառանգ Ալէքսանդր Ալէքսանդրովիչի դիմաւորութեամբ, ձախում Թիւրքական Հա-

*) «Тифлисскій Листокъ»-ѣ խմբադիր Յ. Գ. Խաչատրեան:

յաստանի պատերազմաբեմի հերոսները գեներալ-ադիւ-
տանտ կոմս Լօրիս-Մելիքովի զլխաւորութեամբ։ Մէջտե-
ղի հանդիսաւոր գոնից ներս մտաւ թագաւոր կայսր Ա-
լեքսանդր Երկրորդը, ունենալով աջից իր եղբայր Նիկոլայ
Նիկոլայևիչին՝ Բալկանեան զօրաբանակի զլխաւոր հրա-
մանատարին, իսկ ձախից իր եղբայր Մեծ Իշխան Միխայիլ
Նիկոլայևիչին՝ ասիական ռազմաբեմի Կովկասեան զօրքե-
րի զլխաւոր հրամանատարի։ Հնչեց որուարնդուա «ուռան»։
Կայսրը հերթով մօտենում էր հերոսներին, շնորհաւորում
ու հետները խօսում, առաջինը մօտեցաւ Լօրիսին—համ-
բուրւեց հետը. Երկրորդը կանգնած էր գեներալ Լազարե-
կայսրը մօտեցաւ սրան, համբուրեց և շնորհաւորեց նոր
պատւով՝ գեներալ ագիւտանտի աստիճանով։ Լազարե
յուզւած էր, այս առիւծ մարդու աչքերից թափւում էր
արտասուքը։ Հերթն եկաւ և միւս հերոսներին։

Եւ այսպէս Շուշիի 18 տարեկան հասարակ զերծակիւ-
աշակերտ 19 տարեկան պատանի Լազարե 1839 թւակա-
նին մանելով Շիրւանեան գումար որպէս սոսկ կամաւոր
զինւոր, 48 տարի յետոյ ներկայանում էր Թագաւոր
Կայսեր, կըծքին ունենալով Գէորգի Արդ աստիճանին
հազւագիւտ շքանշանը—այս անգամ արդէն որպէս գենե-
րալ-լէյտենանտ, գեներալ-ագիւտանտ, Կովկասեան զօրա-
բանակի հրամանատար և մէկը այն մի բուռն հերոսնե-
րից, որի անունը ոչ միայն ծանօթ էր ամբողջ Ռուսաս-
տանին ու նրանից գուրս, այլ որը միաժամանակ կազ-
մում էր և մինչև օրս էլ կազմում է ոսւսաց քաջարի
զօրքի պատմութեան պարծանքներից մէկը, որի վրայ ա-
ռանձին ոգևորութեամբ կանգ են առնում նրա կենսա-
գիրները։

Սակայն գրանից յիտոյ Երկար չապրեց Դաղստանի
ու Ղարսի գոռ հիրոսը։



Գեներալ ԼՈԶՈԲԵԻԼ Ալաջայի կուռմ։

1879 թւին նա նշանակւում է Անդրկասպեան Երևանի տիկենցիների գէմ սկսած արշաւանքի ոռւսաց գօրչքի գլխաւոր հրամանատար:

Ստանձնելով իր պաշտօնը, նա սկսեց իր ծանր գործը իրան յատուկ եռանդով։ Սակայն ճանապարհին թիակի մօտ ուսուցք է գոյանում և դառնում է չիբան (քարցիկուլ), որը և նրան անկողին է պառկեցնում։ Ճնայած սոսկալի ցաւերին և տենդային դրութեանը, նա շարունակում է իր ճանապարհը, սակայն այստեղ՝ Զատում վարակւում է նրա արինը և գեներալ Յովհաննէս Լազարականը օգոստոս 14-ին 59 տարնկան հասակում վախճանւում է։

Նրա մարմինը մեծ պատռով բերւում է Բագու, այս տեղից Թիֆլիս և օգոստոս 27-ին շտեմնւած զինորական պատիւներով, թնդանօթների սալիւտի տակ ու տանեակ հազարաւոր ամբոխի ներկայութեամբ թաղւում է Վանքի բակում։

Եւ այժմ Վանքի մայր տաճարի ընդարձակ բակում, ուր ամփոփւած են հայազդի նշանաւոր զաւակների՝ Լօրիս-Մելիքովի, Տէր-Ղուկասովի, Ալիազովի, Շելկովսկովի աճիւնները, ու գրանիտի հոկայական գերեզմանի տակ պառկած է Դաղստանի ու Ղարսի նշանաւոր ներս Յովհաննէս Լազարեանը։

«Գրանիտը կդմանայ գարերին, բայց զրանիտից աւելի ամուր է կենդանի խօսքը, որը կպատմի սերունդներին վառ գոյներով ու պատկերներով այդ նշանաւոր գօրապետի, քաղաքացու և կտուավարչի կեանքն ու արածուածուածի, Յայս խօսքերով է աւարտում գեներալ Պոտոսն ները»։ — Այս խօսքերով է աւարտում գեներալ Լազարեին նւիրած իր ստւար կենսագրականը։

» 16. Կորպուսի հրամանատար Լազարել էրզրումում 55

» 17. Լազարել պատերազմից յետոյ և նրա մահը 61


Ն Կ Ա Ր Ե Բ

1. Գեներալ-Ադմիրանտ Յովհաննէս Լազարեան.
2. Կովկասեան գօրաբոնակի գլխաւոր հրամանատար Մեծ
իշխան Միխայիլ Նիկոլայևիչ.
3. Գործող բանակի հրամանատար գեն.-ադմիրանտ Լորիս-
Մելիքեան.
4. Գեներալ Լազարեանը Ալաջայի կռւում:



Ց Ա Ն Կ

	Երես
Առաջաբան	3
Գլուխ 1. Հասարակ գինուորի աստիճանից մինչև ա- ւագ օֆիցերութիւն	7
» 2. Լազարե Մելիտուլինի իւանութեան կառա- վարիչ	10
» 3. Բնդիարում Հաջի Մուրադի հետ	14
» 4. Լազարե Դարգօի շըջանի կառավարիչ	16
» 5. Զեչնայի նւաճումը	18
» 6. Գունիբի առումը և Շամիլի գերութիւնը	21
» 7. Լազարե որպէս Դաղստանի կառավարիչ	25
» 8. Լազարեի հրաժարականը	27
» 9. Գեներալ Լազարեի գործող բանակ գնալը	29
» 10. Լազարել Եազնիի եւ Աւլիարի կռւում	32
» 11. Լազարել Ալաջայի կռւում	35
» 12. Լազարեի թիկնանց շարժումը	38
» 13. Լազարեի ծրագիրը Ղարսն առնելու մասին	41
» 14. Լազարեի գերը Ղարսի գրոհի և առման ժամ:	44
» 15. Լազարել որպէս Երևանի օտրեադի հրամա- նատար	52



Լոյս են սեսել եւ վճռուում են

Յ Ա Հ Ա Յ Ա Յ Բ

«ԹԻՒԾ-ԹԱՋԿԱԿԱՆ ԱՊԱՄԵՐԱՊՈՒԾ (1877—1878 թ.) և ԿՐՄ
ՀԱՅԱԳԳի ՏԵՐՈՍՆԵՐ» ԱԿՐԻԱՋԻ ՏԵՍԱԿԱԼ ԱՊԱՄԵՐ-
ԲԱԳԱՐԴ ԳՐՔՈՒՂԻՆԵՐԸ:

ԳԻՒՔ I-ին «ԳԵՆԵՐԱԼ-ԱՊԻՎԱՆԻ ԿՈՒՄ
Մ. Տ. ԼՕՐԻԱ-ՄԵԼԻՔՆԱՆ» . . . ԳԻՒՆԻ է 30 կ.

ԳԻՒՔ II-րդ «ԳԱՂԱՄԱՆԻ և ՂԱՐԱԲ ՏԵՐՈՍ
ԳԵՆԵՐԱԼ-ԱՊԻՎԱՆԻ
ՅՈՎՃ, Դ. ԼԱՂԱՐԵԱՆ ԳԻՒՆԻ է 30 կ.

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ԵԿ ՏՊԱԳԻԽՈՒՄ ԵՆ՝

ԳԻՒՔ III-րդ «ԳԵՆԵՐԱԼ-ԼԵյտենանի ԱՐ-
ԺԱԼ Ա, ՏԷՐ-ՂՈՒՂԱՍԻԱՆ» . . . ԳԻՒՆԻ է 30 կ.

ԳԻՒՔ IV-րդ ա) ԳԵՆԵՐԱԼ ՄԱՅՈՐ Բ. ՇԵԼ-
ԻԿՈՒՆԻԿԵԱՆ և բ) ԳԵՆԵՐԱԼ ԻՆ-
ԳԱՆԱԵՐԻԱՋԻ Կ. ԱԼԻՍԱԳԵԱՆ ԳԻՒՆԻ է 30 կ.

ԳԻՒՆԻ է 30 ԿՈՊ.

Այս աշխատութիւնները ծախւում են ԹԻՖԼԻՍԻ բո-
լոր գրավաճառների մօտ. պահեստը հեղինակի մօտ. գի-
մել հետևեալ հասցէով՝ Տիֆլիս, Բեբուտովսկայ № 6.

Անուղականացած Ատանասյանց.

Տաս զրքից աւել զնողները ճանապարհածախը չեն
չեն վճարում: Գումարով զնողներին զեղչ:



«Ազգային գրադարան»

NL0413017

5089